



Համարը N 8-Ն

Տեսակը Պաշտոնական
Ինկորպորացիա

Տիպը Հրաման
Սկզբնաղբյուրը ՀՀԳՏ 2018.07.16/20(623)
Հոդ.162

Կարգավիճակը Գործում է
Ընդունման վայրը Երևան

Ընդունող մարմինը Պաշտպանության նախարար
Ստորագրող մարմինը Պաշտպանության նախարար
Վավերացնող մարմինը
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 26.07.2018

Ընդունման ամսաթիվը 25.06.2018
Ստորագրման ամսաթիվը 25.06.2018
Վավերացման ամսաթիվը
Ուժը կորցնելու ամսաթիվը

+ Կապեր այլ փաստաթղթերի հետ

+ Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՇԱՐՔԱՅԻՆ ԵՎ ՍՊԱՅԱԿԱՆ ԿԱԶՄԵՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶՈՐԱԿՈՉԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶՈՐԱԿՈՉՎԱԾ ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԵՐ ՆՇԱՆԱԿՈՒՄԸ ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ՁԵՎՈՎ ԵՎ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶՈՐԱԿՈՉԻ ԵՆԹԱԿԱ ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐԻՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՊԱՏՎՈ ՊԱՀԱԿԱՅԻՆ ՎԱՇՏՈՒՄ, ԵՐԳԻ ԵՎ ՊԱՐԻ ՀԱՄՈՒՅԹՈՒՄ, ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱԲԻ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՆՎԱԳԱԽՄԲՈՒՄ ԵՎ ԶՈՐԱՄԱՍԵՐԻ ՆՎԱԳԱԽՄԲԵՐՈՒՄ, ԱՐԴԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԽՄԲՈՒՄ, ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ (ԳԻՏԱԿԱՆ) ՎԱՇՏՈՒՄ, ՄԱՐԶԱԿԱՆ ՎԱՇՏՈՒՄ, «ԶԻՆՈՒԺ ՄԵԴԻԱ» ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒՄ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹՅԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

25 հունիսի 2018 թ.
ք. Երևան

N 8-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՇԱՐՔԱՅԻՆ ԵՎ ՍՊԱՅԱԿԱՆ ԿԱԶՄԵՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶՈՐԱԿՈՉԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶՈՐԱԿՈՉՎԱԾ ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԵՐ ՆՇԱՆԱԿՈՒՄԸ ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ՁԵՎՈՎ ԵՎ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶՈՐԱԿՈՉԻ ԵՆԹԱԿԱ ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐԻՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՊԱՏՎՈ ՊԱՀԱԿԱՅԻՆ ՎԱՇՏՈՒՄ, ԵՐԳԻ ԵՎ ՊԱՐԻ ՀԱՄՈՒՅԹՈՒՄ, ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱԲԻ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՆՎԱԳԱԽՄԲՈՒՄ ԵՎ ԶՈՐԱՄԱՍԵՐԻ ՆՎԱԳԱԽՄԲԵՐՈՒՄ, ԱՐԴԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԽՄԲՈՒՄ, ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ (ԳԻՏԱԿԱՆ) ՎԱՇՏՈՒՄ, ՄԱՐԶԱԿԱՆ ՎԱՇՏՈՒՄ, «ԶԻՆՈՒԺ ՄԵԴԻԱ» ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒՄ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹՅԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(վերնագիրը լրաց. 01.07.19 N 7-Ն)

Ղեկավարվելով «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերի պահանջներով

Հրամայում եմ՝

1. Սահմանել՝

- 1) հայտարարված շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության գորակոչի շրջանակներում պարտադիր զինվորական ծառայության գորակոչված քաղաքացիների ծառայության վայրեր նշանակումը կենտրոնացված ձևով և վիճակահանությամբ իրականացնելու կարգը՝ համաձայն հավելված 1-ի,
- 2) հայտարարված սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայության գորակոչի շրջանակներում պարտադիր զինվորական ծառայության գորակոչված քաղաքացիների ծառայության վայրեր նշանակումը վիճակահանությամբ իրականացնելու կարգը՝ համաձայն հավելված 2-ի,
- 3) զինված ուժերի պատվո պահակային վաշտում զինվորական ծառայության նշանակելու նպատակով գորակոչի ենթակա քաղաքացիների ընտրության կարգը՝ համաձայն հավելված 3-ի,
- 4) զինված ուժերի երզնի և պարի համույթում զինվորական ծառայության նշանակելու նպատակով գորակոչի ենթակա քաղաքացիների ընտրության կարգը՝ համաձայն հավելված 4-ի,
- 5) գլխավոր շտաբի զինվորական նվագախմբում և զորամասերի նվագախմբերում զինվորական ծառայության նշանակելու նպատակով գորակոչի ենթակա քաղաքացիների ընտրության կարգը՝ համաձայն հավելված 5-ի,
- 6) արդի տեխնոլոգիաների խմբում զինվորական ծառայության նշանակելու նպատակով գորակոչի ենթակա քաղաքացիների ընտրության կարգը՝ համաձայն հավելված 6-ի,
- 7) տեխնոլոգիական (գիտական) վաշտում զինվորական ծառայության նշանակելու նպատակով գորակոչի ենթակա քաղաքացիների ընտրության կարգը՝ համաձայն հավելված 7-ի:
- 8) մարզական վաշտում զինվորական ծառայության նշանակելու նպատակով գորակոչի ենթակա քաղաքացիների ընտրության կարգը՝ համաձայն հավելված 8-ի.
- 9) «Զինուժ Մեդիա» պետական հիմնարկում զինվորական ծառայության նշանակելու նպատակով գորակոչի ենթակա քաղաքացիների ընտրության կարգը՝ համաձայն հավելված 9-ի:

(1-ին կետը լրաց. 01.07.19 N 7-Ն)

2. Սույն հրամանի 1-ին կետում սահմանված վիճակահանության և ընտրության մրցույթների գործընթացն ապահովելու նպատակով ստեղծել՝

1) հայտարարված շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության գորակոչի շրջանակներում գորակոչված քաղաքացիներին ծառայության վայրեր նշանակելու վիճակահանության հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

ա. գլխավոր շտաբի կազմգործառնակաբաշխի վարչության գործերի համալրման և անձնակազմի հաշվառման բաժնի պետ (հանձնաժողովի նախագահ),

բ. գլխավոր շտաբի կազմգործառնակաբաշխի վարչությունից՝ երեք ներկայացուցիչ,

գ. ռազմական ոստիկանությունից՝ երկու ներկայացուցիչ,

2) շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության գորակոչի ենթակա քաղաքացիներին զինված ուժերի պատվո պահակային վաշտում զինվորական ծառայության նշանակելու ընտրության հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

ա. 14746 զորամասի հրամանատար (հանձնաժողովի նախագահ),

բ. պատվո պահակային վաշտի հրամանատար,

գ. անձնակազմի հետ տարվող աշխատանքների վարչությունից՝ մեկ ներկայացուցիչ,

դ. ռազմական ոստիկանությունից՝ մեկ ներկայացուցիչ,

3) շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության գորակոչի ենթակա քաղաքացիներին գլխավոր շտաբի երզնի և պարի համույթում զինվորական ծառայության նշանակելու ընտրության հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

ա. գլխավոր շտաբի ռազմանվագախմբային բաժնի պետ (հանձնաժողովի նախագահ),

բ. գլխավոր շտաբի երզնի և պարի համույթից՝ երկու ներկայացուցիչ,

գ. «Երևանի պարարվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ից՝ մեկ ներկայացուցիչ (համաձայնությամբ),

դ. Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությունից՝ մեկ ներկայացուցիչ (համաձայնությամբ),

4) շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության գորակոչի ենթակա քաղաքացիներին գլխավոր շտաբի զինվորական նվագախմբում և զորամասերի նվագախմբերում ծառայության նշանակելու ընտրության հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

ա. գլխավոր շտաբի ռազմանվագախմբային բաժնի պետ (հանձնաժողովի նախագահ),

բ. ռազմանվագախմբային ծառայությունից՝ մեկ ներկայացուցիչ,

գ. անձնակազմի հետ տարվող աշխատանքների վարչությունից՝ մեկ ներկայացուցիչ,

դ. Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությունից՝ մեկ ներկայացուցիչ (համաձայնությամբ),

ե. Հայաստանի կոմպոզիտորների միությունից՝ մեկ ներկայացուցիչ (համաձայնությամբ),

5) շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության գորակոչի ենթակա քաղաքացիներին արդի տեխնոլոգիաների խմբում զինվորական ծառայության նշանակելու ընտրության հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

ա. կապի և ավտոմատ կառավարման համակարգերի (այսուհետ՝ կապի և ԱԿՀ) վարչության ավտոմատ կառավարման համակարգերի բաժնի պետ (հանձնաժողովի նախագահ),

բ. կապի և ԱԿՀ վարչության ԱԿՀ բաժնից՝ մեկ ներկայացուցիչ,

գ. կազմգորահավաքային վարչությունից՝ մեկ ներկայացուցիչ,

դ. ռազմական ոստիկանությունից՝ մեկ ներկայացուցիչ,

ե. Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությունից՝ մեկ ներկայացուցիչ (համաձայնությամբ),

զ. «Հայ տեք» կիբեռանվտանգության կենտրոն» հիմնադրամից՝ երեք ներկայացուցիչ (համաձայնությամբ),

ը. արդի տեխնոլոգիաների մշակումների իմբից՝ հինգ ներկայացուցիչ,

6) շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչի ենթակա քաղաքացիներին տեխնոլոգիական (գիտական) վաշտում զինվորական ծառայության նշանակելու ընտրության հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

ա. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի տեղակալ (Պաշտպանության նախարարի որոշմամբ, հանձնաժողովի նախագահ),

բ. ռազմարդյունաբերության կոմիտեից՝ մեկ ներկայացուցիչ,

գ. գլխավոր շտաբի կազմգորահավաքային և օպերատիվ վարչություններից՝ մեկական ներկայացուցիչ,

դ. մարշալ Արմենակ Խանիբեյանցի անվան ռազմական ավիացիոն համալսարանից՝ մեկ ներկայացուցիչ,

ե. Հայաստանի Հանրապետության գիտության և կրթության նախարարության գիտության պետական կոմիտեից՝ մեկ ներկայացուցիչ (համաձայնությամբ),

զ. Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայից՝ մեկ ներկայացուցիչ

(համաձայնությամբ),

է. FAST հիմնադրամից՝ մեկ ներկայացուցիչ (համաձայնությամբ),

ը. «Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագիր» հիմնադրամի ղեկավար մարմնից՝ մեկ ներկայացուցիչ (համաձայնությամբ),

7) շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչի ենթակա քաղաքացիներին մարզական վաշտում զինվորական ծառայության նշանակելու ընտրության հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

ա. զինված ուժերի ֆիզիկական պատրաստության և սպորտի բաժնի պետ (հանձնաժողովի նախագահ),

բ. զինված ուժերի ֆիզիկական պատրաստության և սպորտի բաժնից՝ երկու ներկայացուցիչ,

գ. սպորտի և երիտասարդության հարցերի բնագավառում պետական լիազոր մարմնի մեկ ներկայացուցիչ (համաձայնությամբ),

դ. Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեից՝ մեկ ներկայացուցիչ (համաձայնությամբ).

8) շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչի ենթակա քաղաքացիներին ՊՆ «Զինուժ Մեդիա» պետական հիմնարկում զինվորական ծառայության նշանակելու ընտրության հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

ա. Պաշտպանության նախարարի տեղակալ (Պաշտպանության նախարարի որոշմամբ, հանձնաժողովի նախագահ),

բ. Պաշտպանության նախարարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ,

գ. «Զինուժ Մեդիա» պետական հիմնարկի պետ,

դ. Հայաստանի հանրային հեռուստաընկերությունից՝ մեկ ներկայացուցիչ (համաձայնությամբ),

զ. Երևանի պետական համալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետից՝ մեկ ներկայացուցիչ (համաձայնությամբ):

(2-րդ կետը փոփ., խմբ. 28.12.18 N 17-Ն, լրաց. 01.07.19 N 7-Ն)

3. Սույն հրամանի 2-րդ կետում նշված հանձնաժողովների նախագահներին՝ օրենքով սահմանված կարգով համապատասխան զորակոչի հայտարարման օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում իմ հաստատմանը ներկայացնել հանձնաժողովների անհատական կազմերը:

4. Սահմանել, որ տեխնոլոգիական (գիտական) վաշտում զինվորական ծառայության նշանակելու ընտրության հանձնաժողովի նախագահը՝

1) տեխնոլոգիական (գիտական) վաշտում զինվորական ծառայության նշանակելու ընտրության գործընթացի շրջանակներում կազմավորում է թեստավորման ենթահանձնաժողով և մասնագիտական հետևյալ ենթահանձնաժողովները.

ա. ֆիզիկայի,

բ. ռադիոֆիզիկայի,

գ. ռադիոտեխնիկայի,

դ. քիմիայի,

ե. թվային տեխնոլոգիաների (կառավարման և տեղեկատվական),

զ. ռոբոտատեխնիկայի,

է. անօդաչու թռչող սարքերի,

ը. մեքենաշինության,

թ. սարքաշինության,

ժ. օպտոէլեկտրոնիկայի,

2) թեստավորման ենթահանձնաժողովում ընդգրկում է.

ա. ռազմարդյունաբերության կոմիտեից և գլխավոր շտաբի կազմգործակալաբաշխի վարչությունից՝ մեկական ներկայացուցիչ,

բ. «Գիտելիքի և հմտությունների գնահատման կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից՝ երկու մասնագետ,

3) մասնագիտական ենթահանձնաժողովները ձևավորում է 3-ից 5 անդամով՝ Երևանի պետական համալսարանի չորս, Հայկական պոլիտեխնիկական համալսարանի վեց, ՉՉԳ և «ԿՄԳՀԻ» ՓԲԸ-ների երկուական, Հայ-ռուսական «Մլավոնական», Հայ-ամերիկյան ու մարշալ Ա. Խանիբեյանցի անվան ռազմական ավիացիոն համալսարանների, «ՀՀ ԳԱԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտ», «ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ», «ՀՀ ԳԱԱ մեխանիկայի ինստիտուտ» ՊՈԱԿ-ների, «Արագած», «Ֆերոն», «Լազերային տեխնիկա», «ԵրՄՄԳՀԻ», «65 ռազմական գործարան», «ԼՏ Պիրկալ», «Լոկատոր», «Սատուրն ԱԿԻԱ», «Վ-գեյթ» ընկերությունների, ՀԱՊՀ ԱԹՍ լաբորատորիայի մեկական ներկայացուցիչներից:

(4-րդ կետը խմբ. 28.12.18 N 17-Ն, 01.07.19 N 7-Ն)

5. ՀՀ զինվորական կոմիսարիին՝

ապահովել սույն հրամանի պահանջների համաձայն տարածքային զինվորական կոմիսարիատների կողմից գորակոչի ենթակա քաղաքացիների իրազեկման և անհրաժեշտ դիմումների ընդունման գործընթացը:

ՀՀ պաշտպանության նախարար

Դ. Տոնոյան

Հավելված N 1

ՀՀ պաշտպանության նախարարի

2018 թ. հունիսի 25-ի

N 8-Ն հրամանի

ԿԱՐԳ

ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶՈՐԱԿՈՉԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶՈՐԱԿՈՉՎԱԾ ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԵՐ ՆՇԱՆԱԿՈՒՄԸ ԿԵՆՏՐՈՆԱՅՎԱԾ ԶԵՎՈՎ ԵՎ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ

1. Հայտարարված շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության գորակոչի շրջանակներում (այսուհետ՝ գորակոչ) տարածքային զինվորական կոմիսարիատները «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ օրենք) սահմանված կարգով շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության գորակոչված քաղաքացիներին (այսուհետ՝ գորակոչված զինծառայողներ) ներկայացնում են Հանրապետական հավաքակալան: Հանրապետական հավաքակալանում գորակոչված զինծառայողներին օրենքի և սույն հրամանի պահանջների համաձայն նախորդված ծառայության վայրեր տեղափոխելու աշխատանքներն իրականացնում են ռազմական ոստիկանության ներկայացուցիչները և ուղեկցող անձնակազմը:

2. Զորակոչված զինծառայողներին ծառայության վայրեր նշանակման վիճակահանությունը կազմակերպվում է օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 4-րդ մասերի պահանջները հաշվի առնելով, ինչպես նաև սույն հրամանի համաձայն համապատասխան ծառայության վայրեր նշանակելու ընտրության մրցույթների արդյունքների հիման վրա՝ սույն հրամանի 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ հավելվածներում սահմանված կարգով: Ընդ որում՝

1) օրենքով սահմանված կարգով պաշտպանական բնույթի հասարակական կազմակերպությունում զինվորական մասնագիտական կրթություն ստացած գորակոչված զինծառայողների ծառայության վայրեր նշանակելու վիճակահանությունն իրականացվում է յուրաքանչյուր զինվորական մասնագիտության համար առանձին,

2) ռազմահաշվառական մասնագիտություն ստանալու համար ուսումնական գորամասեր ուղարկվելու համար ընտրված գորակոչված զինծառայողների վիճակահանությունն իրականացվում է՝ հաշվի առնելով գորակոչիկի ստացած կրթությունը,

3) եթե սույն օրվա դրությամբ գորակոչվել են երկու եղբայր և նրանք ցանկություն ունեն ծառայության նշանակվել միևնույն գորամասում, ապա վիճակահանությանը մասնակցում է եղբայրներից միայն մեկը,

4) եթե գորակոչված զինծառայողն ունի շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող եղբայր, որի ծառայության մեջ գտնվելու ժամկետը չի գերազանցում 17 ամիսը, ապա կարող է իր ցանկությամբ ծառայության նշանակվել եղբոր ծառայության վայրի գորամասում՝ չմասնակցելով վիճակահանությանը,

5) Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 21-ի N 1675-Ն որոշման պահանջների համաձայն Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հետ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից նշված վայրում և պայմաններում զինվորական

ծառայություն անցնելու պայմանագիր կնքած գորակոչված զինծառայողները չեն մասնակցում վիճակահանությանը,

6) Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 430-Ն որոշման պահանջների համաձայն Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հետ ուսումնառության ընթացքում զինվորական պատրաստություն անցնելու և ուսումնառության ավարտից հետո Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից նշված վայրում և պայմաններով զինվորական ծառայություն անցնելու պայմանագիր կնքած գորակոչված զինծառայողները չեն մասնակցում վիճակահանությանը,

7) տվյալ գորակոչի շրջանակներում սպայական կամ սերժանտական դասընթացներ կազմակերպված լինելու դեպքում՝ համապատասխան դասընթացին մասնակցելու դիմում ներկայացրած և համապատասխան դասընթաց անցնելու համար ընտրված գորակոչված զինծառայողները չեն մասնակցում վիճակահանությանը:

3. Վիճակահանության հանձնաժողովի նիստն իրավագոր է, եթե նիստին մասնակցում են հանձնաժողովի անդամների կեսից ավելին: Վիճակահանությունն իրականացնելու նպատակով վիճակահանության հանձնաժողովի կողմից պատրաստվում են տվյալ օրվա դրությամբ համալրման ենթակա գորամասերի պայմանական համարներով թերթիկներ (այսուհետ՝ վիճակահանության թերթիկ), որոնք կնքվում են գլխավոր շտաբի կնիքով, ծալվում են և մետաղյա ամրակով ամրացվում այնպես, որպեսզի գորամասի պայմանական համարը չերևա, որից հետո դրանք լցվում են (գորամասերի ընդհանուր համալրման և սույն հրամանով սահմանված ծառայության համապատասխան վայրերի ընտրության) վիճակահանության թմբուկներում:

4. Վիճակահանությանը մասնակցելու նպատակով գորակոչված զինծառայողները ներկայացվում են վիճակահանության դահլիճ, որտեղ հերթով մոտենում են իրենց կարգավիճակին համապատասխանող (գորամասերի ընդհանուր համալրման և սույն հրամանով սահմանված ծառայության համապատասխան վայրերի ընտրության) թմբուկին և վիճակահանության հանձնաժողովի ներկայությամբ թմբուկից հանում վիճակահանության մեկ թերթիկ, բացում և բարձրաձայն կարդում են վիճակահանության թերթիկում նշված գորամասի պայմանական համարը, որից հետո այն տալիս են հանձնաժողովի անդամին: Ստացված վիճակահանության թերթիկի հիման վրա հանձնաժողովի անդամը տվյալ գորակոչված զինծառայողի վիճակահանության թերթիկում գրառում է գորակոչված գորակոչիկի անունը, հայրանունը, ազգանունը և զինկոմիսարիատը, վիճակահանության հանձնաժողովի պատասխանատուն կնքում և ստորագրում է վիճակահանության թերթիկը, որից հետո գորակոչված զինծառայողը ստորագրում է վիճակահանության թերթիկի համապատասխան տողում և դուրս գալիս վիճակահանության դահլիճից:

5. Վիճակահանության արդյունքների վերաբերյալ վիճակահանության հանձնաժողովի կողմից կազմվում են արձանագրություններ, որոնք վիճակահանության հանձնաժողովի ԷՀՄ տեխնիկ-օպերատորի կողմից մուտքագրվում են համակարգչում առկա գորակոչված զինծառայողների անձնական տվյալներում: Վիճակահանության գործընթացը տեսաձայնագրվում և պահվում է էլեկտրոնային կրիչների վրա:

6. Ձորակոչված զինծառայողների կողմից վիճակահանության թմբուկներից հանված վիճակահանության թերթիկները վիճակահանության հանձնաժողովի կողմից տվյալ օրվա վերջում առանձին արձանագրությամբ ակտավորվում են՝ որպես տվյալ օրվա դրությամբ օգտագործված վիճակահանության թերթիկներ, և հանձնվում գլխավոր շտաբի կազմակերպիչի վարչության գաղտնի մաս՝ պահպանության:

Հավելված N 2
ՀՀ պաշտպանության նախարարի
2018 թ. հունիսի 25-ի
N 8-Ն հրամանի

ԿԱՐԳ

ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՍՊԱՅԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶՈՐԱԿՈՉԻ ԾՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶՈՐԱԿՈՉՎԱԾ ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԵՐ ՆՇԱՆԱԿՈՒՄԸ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ

1. Հայտարարված պահեստագործի առաջին խմբի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայության գորակոչի շրջանակներում (այսուհետ՝ գորակոչ) զինվորական կոմիսարիատները «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ օրենք) սահմանված կարգով սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայության գորակոչված քաղաքացիներին (այսուհետ՝ գորակոչված սպաներ) ներկայացնում են Հայաստանի Հանրապետության զինվորական կոմիսարիատ: Ձորակոչված սպաներին՝ օրենքի պահանջների համաձայն և վիճակահանության արդյունքներով նախորոշված ծառայության վայրեր մեկնելու նպատակով, կադրերի և ռազմական կրթության վարչության կողմից տրվում են կարգադրագրեր՝ 3-օրյա ժամկետում նախորոշված ծառայության վայր ներկայանալու համար:

2. Ձորակոչված սպաներին ծառայության վայրեր նշանակման վիճակահանությունը կազմակերպվում է օրենքի 26-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջները հաշվի առնելով՝ Օրենքի 25-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն ստեղծված պահեստագործի սպաների գորակոչի մանդատային հանձնաժողովի կողմից (այսուհետ՝ մանդատային հանձնաժողով):

Մանդատային հանձնաժողովի նիստն իրավագոր է, եթե նիստին մասնակցում են հանձնաժողովի անդամների կեսից ավելին:

3. Վիճակահանությունն իրականացվում է ըստ հոսպիտալային օդակի և գորամասային օդակի համալրման հերթականությամբ: Ընդ որում, ասպիրանտուրա (դոկտորանտուրա) ավարտած կամ գիտական աստիճան ունեցող գորակոչված սպաների վիճակահանությունն իրականացվում է առանձին՝ ըստ գիտական մասնագիտացման, իսկ հոսպիտալային օդակի համալրման ենթակա հաստիքների վիճակահանությանը մասնակցում են այն գորակոչված սպաները, ովքեր ունեն այդ հաստիքների համար սահմանված մասնագիտացմանը համապատասխանող մասնագիտացում:

4. Համալրման ենթակա բոլոր թափուր հաստիքների անվանումներով, ըստ դրանց համար սահմանված մասնագիտացման, պատրաստվում են փակ ծրարներ՝ ամրացված մետաղյա ամրակով և կնքված կադրերի և ռազմական կրթության վարչության կնիքով: Յուրաքանչյուր ծրար պարունակում է համալրման ենթակա մեկ գորամասի պայմանական համարը պարունակող ծավված թերթիկ (այսուհետ՝ վիճակահանության թերթիկ):

5. Ըստ մասնագիտացումների համալրման ենթակա տեղերի և ըստ մասնագիտացումների առկա գորակոչված սպաների հարաբերակցությունը պահպանելու համար տվյալ մասնագիտացմամբ վիճակահանությանը մասնակցում են այդպիսի մասնագիտացում ունեցող բոլոր գորակոչված սպաները, որի նպատակով ավելացվում են վիճակահանության դատարկ ծրարներ: Այդպիսի ծրարներ ընտրած գորակոչված սպաները այնուհետև մասնակցում են գորամասերի բուժկետերի թափուր հաստիքների համալրման վիճակահանությանը:

6. Ըստ մասնագիտացումների հոսպիտալային համակարգի թափուր պաշտոնների պահանջարկը համալրվելու դեպքում համապատասխան մասնագիտացումներով գորակոչված սպաները մասնակցում են գորամասերի բուժկետերի թափուր հաստիքների համալրման վիճակահանությանը:

7. Վիճակահանությանը մասնակցելու նպատակով գորակոչված սպաները ներկայանում են վիճակահանության դահլիճ, որտեղ հերթով, ըստ մասնագիտացումների, մոտենում են ծրարների սեղանին և պատահականության սկզբունքով վերցնում տվյալ մասնագիտացման ծրարների խմբից մեկ ծրար, բացում և բարձրաձայն կարդում են վիճակահանության թերթիկում նշված գորամասի պայմանական համարը, ստորագրում վիճակահանության թերթիկի վրա և այն տալիս հանձնաժողովի քարտուղարին:

8. Վիճակահանության արդյունքներն արձանագրվում են մանդատային հանձնաժողովի քարտուղարի կողմից: Մանդատային հանձնաժողովի արձանագրությունն ուղարկվում է պաշտպանության նախարարության կադրերի և ռազմական կրթության վարչություն: Տվյալ գորակոչված սպայի կողմից բացված վիճակահանության ծրարը կցվում է նրա անձնական գործին:

Հավելված N 3
ՀՀ պաշտպանության նախարարի
2018 թ. հունիսի 25-ի
N 8-Ն հրամանի

ԿԱՐԳ

**ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՊԱՏՎՈ ՊԱՀԱԿԱՅԻՆ ՎԱՇՏՈՒՄ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԶՈՐԱԿՈՉԻ ԵՆԹԱԿԱ ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ**

1. Սույն կարգով սահմանվում է պատվո պահակային վաշտում զինվորական ծառայության նշանակելու նպատակով հայտարարված շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության գորակոչի շրջանակներում գորակոչի ենթակա քաղաքացիների (այսուհետ՝ գորակոչիկներ) ընտրության պայմանները և հանձնաժողովի գործունեության կարգը:

2. Զորակոչիկների ընտրության նպատակով հանձնաժողովը իրականացնում է դիտումներ, որի անցկացման օրվա և ժամի վերաբերյալ տեղեկատվությունը, գորակոչի սկսվելու օրվան նախորդող 20-րդ օրից ոչ ուշ, հրապարակվում է պաշտպանության նախարարության պաշտոնական կայքում և լրատվամիջոցներով: Տարածքային զինկումիսարիատներն իրականացնում են դիտումներին մասնակցելու ցանկություն հայտնած գորակոչիկների հաշվառում և հաշվառված գորակոչիկների անվանացուցակները դիտումների օրվանից առնվազն երկու աշխատանքային օր առաջ ուղարկում են հանձնաժողովի նախագահին:

3. Հանձնաժողովի կողմից ընտրություն կատարելիս հիմք են ընդունվում գորակոչիկի միաժամանակյա համապատասխանությունը հետևյալ պայմաններին.

- 1) հասակը՝ 180-ից 190սմ,
- 2) դեմքի և մարմնի երևացող այլ մասերի վրա դաջվածքների և սպիների բացակայություն,
- 3) մարմնի զանգվածի և հասակի կանոնավոր հարաբերակցություն,
- 4) դեմքի գեղեցիկ և համաչափ դիմագծեր,
- 5) առանց որևէ շտկման և ճիշտ գունային զգացողությամբ տեսողություն,
- 6) ոչ պակաս, քան 6 մետր հեռավորության վրա շշուկային խոսքի ընկալման լսողություն:

4. Պատվո պահակային վաշտում զինվորական ծառայության նշանակելու նպատակով անցկացվող ընտրությանը մասնակցելու նպատակով սույն կարգի 2-րդ կետի համաձայն չեն կարող հաշվառվել՝

- 1) պաշտպանական մարզատեխնիկական հասարակական կազմակերպությունում պաշտպանության նախարարության պատվերով ռազմահաշվառական մասնագիտություն ստացած զորակոչիկները,
- 2) ռազմաուսումնական հաստատությունների դիմորդները:

(4-րդ կետը փոփ. 28.12.18 N 17-Ն)

5. Հանձնաժողովի կողմից չեն կարող ընտրվել սույն կարգի 3-րդ կետում սահմանված պայմանները բավարարող, սակայն դատվածություն ունեցող կամ հոգեներողգիական կամ նարկոլոգիական կամ մաշկավեներողգիական դիսպանսերներում հաշվառված կամ սահմանափակումով զինվորական ծառայության համար պիտանի ճանաչված զորակոչիկները, ինչպես նաև միաժամանակ զորակոչվող եղբայրները, եթե եղբայրները ցանկություն են հայտնել ծառայության նշանակվել միևնույն զորամասում և նրանցից մեկի տվյալները չեն բավարարում սույն կարգի 3-րդ կետում սահմանված պայմաններին կամ այն զորակոչիկը, ում եղբայրը պարտադիր զինվորական ծառայություն է անցնում պատվո պահակային վաշտում, սակայն զորակոչիկի տվյալները չեն բավարարում սույն կարգի 3-րդ կետում սահմանված պայմաններին:

(5-րդ կետը լրաց. 28.12.18 N 17-Ն)

6. Չորակոչիկները դիտումներին մասնակցում են անձը հաստատող փաստաթղթով: Հանձնաժողովի կողմից դիտումները յուրաքանչյուր օրվա համար չեն կարող գերազանցել 50 անձը:

7. Դիտումներն անցկացվում են 14746 զորամասում: Դիտումներին կարող են մասնակցել նաև զորակոչիկների ծնողները կամ զորակոչիկի կողմից նշված այլ անձինք, սակայն յուրաքանչյուր զորակոչիկի մասով՝ 2 անձից ոչ ավելի: Դիտումներին կարող են ներկա գտնվել նաև հասարակական կազմակերպություններից ներկայացուցիչներ և լրագրողներ, որի վերաբերյալ վերջիններս մինչև դիտումների սկսվելը տեղեկացնում են հանձնաժողովի նախագահին: Դիտումների ընթացքը տեսաձայնագրվում է:

(7-րդ կետը լրաց. 28.12.18 N 17-Ն)

8. Հանձնաժողովի նիստն իրավագոր է, եթե նիստին մասնակցում են հանձնաժողովի անդամների կեսից ավելին: Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ զորակոչիկի գնահատումն իրականացնում է գլխավոր շտաբի վարչական ապարատի ղեկավարի կողմից կնքված և հաստատված գնահատման ձևաթերթիկի վրա սույն կարգի 3-րդ կետում նշված յուրաքանչյուր պայմանի դիմաց «Համապատասխանում է պայմանին» կամ «Չի համապատասխանում պայմանին» գրառում կատարելու և ստորագրելու միջոցով: Պատվո պահակային վաշտում ծառայության նշանակելու նպատակով ընտրված են համարվում այն զորակոչիկները, որոնց գնահատման ձևաթերթիկում բոլոր պայմանների դիմաց հանձնաժողովի բոլոր անդամները կատարել են «Համապատասխանում է պայմանին» գրառումը և ստորագրել են:

9. Հանձնաժողովի կողմից պատվո պահակային վաշտում ծառայության նշանակելու նպատակով ընտրության անցկացման գործընթացն արձանագրվում է: Արձանագրությունը ստորագրում են հանձնաժողովի բոլոր անդամները: Արձանագրությունը ներկայացվում է գլխավոր շտաբի պետի հաստատմանը: Ընտրությանը մասնակցող զորակոչիկի ցանկությամբ իր մասով արձանագրության պատճենը տրամադրվում է վերջինիս: Իր մասով դիտումների արդյունքների հետ համաձայն չլինելու դեպքում զորակոչիկը կարող է այն բողոքարկել գլխավոր շտաբի պետին: Բողոքի քննարկման ժամանակ նոր դիտում չի անցկացվում, բողոքի վերաբերյալ որոշում կայացվում է դիտումների տեսաձայնագրության ուսումնասիրության արդյունքներով:

(9-րդ կետը լրաց. 28.12.18 N 17-Ն)

10. Պատվո պահակային վաշտում ծառայության նշանակելու վիճակահանությունն իրականացվում է գլխավոր շտաբի կազմազորահավաքային վարչության կողմից նշանակված միասնական օրը՝ հանրապետական հավաքակայանում:

11. Պատվո պահակային վաշտում ծառայության նշանակելու նպատակով ընտրված զորակոչիկները մասնակցում են վաշտի թափուր հաստիքների համալրման վիճակահանությանը, ընդ որում՝

- 1) եթե ընտրված զորակոչիկների թիվը համապատասխանում է պատվո պահակային վաշտի թափուր հաստիքների քանակին կամ պակաս է այդ քանակից, ապա նշված զորակոչիկները համարվում են վիճակահանությամբ նշանակված պատվո պահակային վաշտում,
- 2) եթե ընտրված զորակոչիկների թիվն ավել է պատվո պահակային վաշտի թափուր հաստիքների քանակից, ապա պատվո պահակային վաշտի համալրման ենթակա հաստիքների վիճակահանության արկղում դրվում են վիճակահանությանը մասնակցող զորակոչիկների քանակին համապատասխանող թերթիկներ, որոնց մի մասում նշված է պատվո պահակային վաշտի համապատասխան հաստիքը, իսկ մնացած թերթիկներն առանց որևէ նշման են: Առանց նշման թերթիկ հանած զորակոչիկները մասնակցում են զորամասերի համալրման ընդհանուր վիճակահանությանը:

(11-րդ կետը խմբ. 28.12.18 N 17-Ն)

12. Պատվո պահակային վաշտում ծառայության նշանակելու նպատակով վիճակահանությունն անցկացվում է սույն հրամանի հավելված 1-ի 4-րդ, 5-րդ և 6-րդ կետերի պահանջների համաձայն:

13. Զինվորական ծառայության ընթացքում պատվո պահակային վաշտում ծառայության համար անհրաժեշտ պայմանները չբավարարող զինծառայողները կարող են «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջների համաձայն տեղափոխվել ծառայության այլ վայր:

(13-րդ կետը փոփ. 28.12.18 N 17-Ն)

(հավելվածը փոփ., լրաց., խմբ. 28.12.18 N 17-Ն)

Հավելված N 4
ՀՀ պաշտպանության նախարարի
2018 թ. հունիսի 25-ի
N 8-Ն հրամանի

ԿԱՐԳ

ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԵՐԳԻ ԵՎ ՊԱՐԻ ՀԱՄՈՒՅԹՈՒՄ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԶՈՐԱԿՈՉԻ ԵՆԹԱԿԱ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է զինված ուժերի երգի և պարի համույթում ծառայության նշանակելու նպատակով հայտարարված շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության գորակոչի շրջանակներում գորակոչի ենթակա քաղաքացիների (այսուհետ՝ գորակոչիկներ) ընտրության պայմանները և հանձնաժողովի գործունեության կարգը:

2. Զորակոչիկների ընտրության նպատակով հանձնաժողովը իրականացնում է դիտումներ, որի անցկացման օրվա և ժամի վերաբերյալ տեղեկատվությունը, գորակոչի սկսվելու օրվան նախորդող 20-րդ օրից ոչ ուշ, հրապարակվում է պաշտպանության նախարարության պաշտոնական կայքում և լրատվամիջոցներով: Տարածքային զինկոմիսարիատներն իրականացնում են դիտումներին մասնակցելու ցանկություն հայտնած գորակոչիկների հաշվառում ըստ անհրաժեշտ երգարվեստի և պարային մասնագետների հայտ-պահանջարկի, և հաշվառված գորակոչիկների անվանացուցակները դիտումների օրվանից առնվազն երկու աշխատանքային օր առաջ ուղարկում են զինված ուժերի երգի և պարի համույթի ղեկավարին:

3. Զինված ուժերի երգի և պարի համույթում զինվորական ծառայության նշանակելու նպատակով անցկացվող ընտրությանը մասնակցելու նպատակով սույն կարգի 2-րդ կետի համաձայն չեն կարող հաշվառվել

- 1) պաշտպանական մարզատեխնիկական հասարակական կազմակերպությունում պաշտպանության նախարարության պատվերով ռազմահաշվառական մասնագիտություն ստացած գորակոչիկները,
- 2) ռազմաուսումնական հաստատությունների դիմորդները:

(3-րդ կետը փոփ. 28.12.18 N 17-Ն)

4. Զորակոչիկները դիտումներին մասնակցում են անձը հաստատող փաստաթղթով: Հանձնաժողովի կողմից դիտումները յուրաքանչյուր օրվա համար չեն կարող գերազանցել 50 անձը:

5. Դիտումներն անցկացվում են «Սարդարապատ» պարի անսամբլի փորձասրահում՝ ք. Երևան, Քաջազունի 1 հասցեում: Դիտումների ամբողջ ընթացքը տեսաձայնագրվում է:

6. Դիտումներին կարող են մասնակցել նաև գորակոչիկների ծնողները կամ գորակոչիկի կողմից նշված այլ անձինք, սակայն յուրաքանչյուր գորակոչիկի մասով՝ 2 անձից ոչ ավելի: Դիտումներին կարող են ներկա գտնվել նաև հասարակական կազմակերպություններից ներկայացուցիչներ և լրագրողներ, որի վերաբերյալ վերջիններս մինչև դիտումների սկսվելը տեղեկացնում են հանձնաժողովի նախագահին:

7. Հանձնաժողովի նիստն իրավագոր է, եթե նիստին մասնակցում են հանձնաժողովի անդամների կեսից ավելին: Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ գորակոչիկի գնահատումն իրականացնում է գլխավոր շտաբի վարչական սպարաուի ղեկավարի կողմից կնքված և հաստատված գնահատման ձևաթերթիկով: Հանձնաժողովի անդամների գնահատականները յուրաքանչյուր մասնակցի համար գումարվում են և բաժանվում նիստին ներկա գտնվող հանձնաժողովի անդամների թվին, որի արդյունքով ձևավորվում է յուրաքանչյուր մասնակցի միջին թվաբանական գնահատականը:

8. Զորակոչիկների կատարողական վարպետության գնահատումն իրականացվում է բալային համակարգով՝ բաղկացած հետևյալ հիմնական մասերից (յուրաքանչյուրն առավելագույնը 20 բայ) .

- 1) դասական պար,
- 2) հայկական ժողովրդական պար,
- 3) այլ ժողովրդական պարեր,
- 4) պարարվեստում օգտագործվող ուժային շարժումներ,
- 5) ռիթմիկա (ռիթմի ընկալում):

9. Յուրաքանչյուր մասնակցի գնահատականը հաշվարկվում և հայտարարվում է տեղում: «Գերազանց» գնահատվում է 85 և ավելի բալլ, «Լավ»՝ 70-84 բալլ, իսկ մինչև 70 բալլ գնահատվում է «Անբավարար»: «Անբավարար» գնահատական ստացած գորակոչիկներն իրավունք չեն ստանում մասնակցելու զինված ուժերի երգի և պարի համույթում ծառայության նշանակելու նպատակով անցկացվող վիճակահանությանը և նրանց ծառայության վայրեր նշանակումն իրականացվում է սույն հրամանի 1-ին հավելվածով սահմանված կարգով՝ ընդհանուր վիճակահանության շրջանակում: Զինված ուժերի երգի և պարի համույթում ծառայության չեն կարող նշանակվել միաժամանակ գորակոչվող եղբայրները, եթե եղբայրները ցանկություն են հայտնել ծառայության նշանակվել միևնույն գորամատում և նրանցից մեկը չի մասնակցել դիտումներին

կամ ստացել է «Անբավարար» գնահատական, ինչպես նաև այն գորակոչիկը, ում եղբայրը պարտադիր զինվորական ծառայություն է անցնում զինված ուժերի երգի և պարի համույթում, սակայն գորակոչիկը չի մասնակցել դիտումներին կամ ստացել է «Անբավարար» գնահատական:

(9-րդ կետը լրաց. 28.12.18 N 17-Ն)

10. Դիտումների արդյունքներն արձանագրվում են: Արձանագրությունը ստորագրում են հանձնաժողովի բոլոր անդամները: Արձանագրությունը գլխավոր շտաբի պետի հաստատմանը ներկայացման ժամկետներ են սահմանվում դիտումների օրվան հաջորդող աշխատանքային 3-օրյա ժամկետը, իսկ բողոքարկման դիմումների առկայության դեպքում՝ 5-օրյա ժամկետը: Բողոքարկման արդյունքներով գորակոչիկի գնահատականը փոխվելու դեպքում փոփոխությունը ևս արձանագրվում է: Ընտրությանը մասնակցող գորակոչիկի ցանկությամբ իր մասով արձանագրության պատճենը տրամադրվում է վերջինիս: Իր մասով լսումների վերջնական արդյունքների հետ համաձայն չլինելու դեպքում գորակոչիկը կարող է այն բողոքարկել գլխավոր շտաբի պետին: Բողոքի քննարկման ժամանակ նոր լսում չի անցկացվում, բողոքի վերաբերյալ որոշում կայացվում է լսումների տեսաձայնագրության ուսումնասիրության արդյունքներով:

(10-րդ կետը լրաց. 28.12.18 N 17-Ն)

11. Զինված ուժերի երգի և պարի համույթի թափուր հաստիքների համալրման վիճակահանությունն իրականացվում է գլխավոր շտաբի կազմգորահավաքային վարչության կողմից նշանակված միասնական օրը՝ հանրապետական հավաքակայանում:

12. Զինված ուժերի երգի և պարի համույթում յուրաքանչյուր մասնագիտությամբ թափուր հաստիքների համալրման վիճակահանությանը մասնակցում են «Գերազանց» գնահատական ստացած գորակոչիկները, ընդ որում, եթե տվյալ մասնագիտությամբ՝

1) «Գերազանց»՝ գնահատական ստացածների թիվը համապատասխանում է զինված ուժերի երգի և պարի համույթի թափուր հաստիքների քանակին կամ պակաս է այդ քանակից, սպա նշված գորակոչիկները համարվում են վիճակահանությամբ նշանակված զինված ուժերի երգի և պարի համույթում,

2) եթե «Գերազանց» գնահատական ստացածների թիվն ավել է զինված ուժերի երգի և պարի համույթի թափուր հաստիքների քանակից, սպա երգի և պարի համույթի համալրման երթակա հաստիքների վիճակահանության արկղում դրվում են վիճակահանությանը մասնակցող գորակոչիկների քանակին համապատասխանող թերթիկներ, որոնց մի մասում նշված է զինված ուժերի երգի և պարի համույթի համապատասխան հաստիքը, իսկ մնացած թերթիկներն առանց որևէ նշման են: Առանց նշման թերթիկ հանած գորակոչիկները մասնակցում են գորամասերի համալրման ընդհանուր վիճակահանությանը,

3) սույն կետի 1-ին ենթակետում նախատեսված «Գերազանց» գնահատական ստացածների թիվը զինված ուժերի երգի և պարի համույթի թափուր հաստիքների քանակից պակաս լինելու դեպքում՝ չհամալրված հաստիքների մասով, ինչպես նաև եթե «Գերազանց» գնահատական չի ստացել ոչ մի գորակոչիկ, սպա երգի և պարի համույթի թափուր հաստիքների համալրման վիճակահանությանը մասնակցում են նաև «Լավ» գնահատական ստացածները: Եթե վիճակահանությանը մասնակցողների թիվը համապատասխանում է զինված ուժերի երգի և պարի համույթի թափուր հաստիքների քանակին կամ պակաս է այդ քանակից, սպա վիճակահանության արկղում ներառվում են միայն համապատասխան հաստիքների նշումով թերթիկներ: Եթե վիճակահանությանը մասնակցողների թիվն ավել է զինված ուժերի երգի և պարի համույթի թափուր հաստիքների քանակից, սպա վիճակահանության արկղում դրվում են վիճակահանությանը մասնակցող գորակոչիկների քանակին համապատասխանող թերթիկներ, որոնց մի մասում նշված են համապատասխան հաստիքները, իսկ մնացած թերթիկներն առանց որևէ նշման են: Առանց նշման թերթիկ հանած գորակոչիկները մասնակցում են գորամասերի համալրման ընդհանուր վիճակահանությանը:

(12-րդ կետը փոփ., լրաց. 28.12.18 N 17-Ն)

13. Զինված ուժերի երգի և պարի համույթում ծառայության նշանակելու նպատակով վիճակահանությունն անցկացվում է սույն հրամանի հավելված 1-ի 4-րդ, 5-րդ և 6-րդ կետերի պահանջների համաձայն:

14. Զինվորական ծառայության ընթացքում զինված ուժերի երգի և պարի համույթում ծառայության համար անհրաժեշտ պայմանները չբավարարող զինծառայողները կարող են «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջների համաձայն տեղափոխվել ծառայության այլ վայր:

(14-րդ կետը փոփ. 28.12.18 N 17-Ն)

(հավելվածը փոփ., լրաց. 28.12.18 N 17-Ն)

Հավելված N 5
ՀՀ պաշտպանության նախարարի
2018 թ. հունիսի 25-ի
N 8-Ն հրամանի

ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱԲԻ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՆՎԱԳԱԽՄԲՈՒՄ ԵՎ ԶՈՐԱՄԱՍԵՐԻ ՆՎԱԳԱԽՄԲԵՐՈՒՄ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԶՈՐԱԿՈՉԻ ԵՆԹԱԿԱ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է գլխավոր շտաբի զինվորական նվագախմբում և գորամասերի նվագախմբերում ծառայության նշանակելու նպատակով հայտարարված շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության գորակոչի շրջանակներում գորակոչի ենթակա քաղաքացիների (այսուհետ՝ գորակոչիկներ) ընտրության պայմանները և հանձնաժողովի գործունեության կարգը:

2. Գլխավոր շտաբի զինվորական նվագախմբում և գորամասերի նվագախմբերում ծառայության նշանակելու ընտրությանը մասնակցում են երաժշտական փողային և հարվածային գործիքների տիրապետող մասնագետները: Զորակոչիկների ընտրության նպատակով հանձնաժողովը իրականացնում է լուսմներ, որի անցկացման օրվա և ժամի վերաբերյալ տեղեկատվությունը, գորակոչի սկսվելու օրվան նախորդող 20-րդ օրից ոչ ուշ, հրապարակվում է պաշտպանության նախարարության պաշտոնական կայքում և լրատվամիջոցներով: Տարածքային զինկոմիսարիատներն իրականացնում են լուսմներին մասնակցելու ցանկություն հայտնած գորակոչիկների հաշվառվում՝ ըստ անհրաժեշտ երաժշտական փողային և հարվածային գործիքների տիրապետող մասնագետների հայտ-պահանջարկի, և հաշվառված գորակոչիկների անվանացուցակները լուսմների օրվանից առնվազն երկու աշխատանքային օր առաջ ուղարկում են գլխավոր շտաբի ռազմական նվագախմբային բաժնի պետին:

3. Գլխավոր շտաբի զինվորական նվագախմբում և գորամասերի նվագախմբերում զինվորական ծառայության նշանակելու նպատակով անցկացվող ընտրությանը մասնակցելու նպատակով սույն կարգի 2-րդ կետի համաձայն չեն կարող հաշվառվել՝

1) պաշտպանական մարզատեխնիկական հասարակական կազմակերպությունում պաշտպանության նախարարության պատվերով ռազմահաշվառական մասնագիտություն ստացած գորակոչիկները,

2) ռազմաուսումնական հաստատությունների դիմորդները:
(3-րդ կետը փոփ. 28.12.18 N 17-Ն)

4. Զորակոչիկները լուսմներին մասնակցում են իրենց երաժշտական փողային կամ հարվածային գործիքներով, իրենց կողմից կատարվող ստեղծագործությունների հրատարակված նոտաներով և անձը հաստատող փաստաթղթով: Հանձնաժողովի կողմից լուսմները յուրաքանչյուր օրվա համար չեն կարող գերազանցել 50 անձը:

5. Լուսմները անցկացվում են 14746 գորամասում՝ գլխավոր շտաբի զինվորական նվագախմբի մեծ փորձասենյակում: Լուսմների ամբողջ ընթացքը տեսաձայնագրվում է:

6. Լուսմներին կարող են մասնակցել նաև գորակոչիկների ծնողները կամ գորակոչիկի կողմից նշված այլ անձինք, սակայն յուրաքանչյուր գորակոչիկի մասով՝ 2 անձից ոչ ավելի: Լուսմներին կարող են ներկա գտնվել նաև հասարակական կազմակերպություններից ներկայացուցիչներ և լրագրողներ, որի վերաբերյալ վերջիններս մինչև լուսմների սկսվելը տեղեկացնում են հանձնաժողովի նախագահին:

7. Հանձնաժողովի նիստն իրավագոր է, եթե նիստին մասնակցում են հանձնաժողովի անդամների կեսից ավելին: Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ գորակոչիկի գնահատումն իրականացնում է գլխավոր շտաբի վարչական սպարապետի ղեկավարի կողմից կնքված և հաստատված գնահատման ձևաթերթիկով: Հանձնաժողովի անդամների գնահատականները յուրաքանչյուր մասնակցի համար գումարվում են և բաժանվում նիստին ներկա գտնվող հանձնաժողովի անդամների թվին, որի արդյունքով ձևավորվում է յուրաքանչյուր մասնակցի միջին թվաբանական գնահատականը:

8. Զորակոչիկների գնահատումն իրականացվում է բալային համակարգով՝ բաղկացած հետևյալ հիմնական մասերից (յուրաքանչյուրն առավելագույնը 20 բալլ) .

- 1) երաժշտական փողային գործիքների տիրապետող մասնագետների համար՝
 - ա. գամմաներ (մինչև 4 նշան, զուգահեռ՝ մաժոր և մինոր), արպեջիոներ իրենց շրջվածքներով (3/5, 4/6 և 7 ակորդներ),
 - բ. երկու տարաբնույթ էտյուդ,
 - գ. երկու տարաբնույթ պիես,
 - դ. անձանոթ նոտային տեքստի ընթերցում,
 - ե. երաժշտության տեսական գիտելիքների ստուգում.
- 2) երաժշտական հարվածային գործիքների տիրապետող մասնագետների համար՝
 - ա. երկու էտյուդ,
 - բ. երկու տարաբնույթ պիես,
 - գ. անձանոթ նոտային տեքստի (ոխթմիկ պատկերներ) ընթերցում,
 - դ. երկակի և եռակի հարվածների կատարում առանձին ձեռքերով, աստիճանաբար արագացնելով հասցնել տրեմոլո, մանր և խոշոր տրեմոլոյի կատարում՝ դինամիկ աստիճանավորումներով (p, f, ppp crescendo fff diminuendo ppp, fff diminuendo ppp crescendo fff),
 - ե. երաժշտական տարրական տեսության գիտելիքների ստուգում:
- 9. Կատարումների գնահատման ժամանակ հաշվի են առնվում ձայնի որակը, շտրիխների և դինամիկայի

տիրապետման աստիճանը, ինչպես նաև ստեղծագործության գեղարվեստական բովանդակության բացահայտումը:

10. Զորակոչիկի գնահատականը հաշվարկվում և հայտարարվում է տեղում: «Գերազանց» գնահատվում է 85 և ավելի բալլը, «Լավ»՝ 70-84 բալլը, իսկ մինչև 70 բալլը գնահատվում է «Անբավարար»: Գլխավոր շտաբի զինվորական նվագախմբում և զորամասերի նվագախմբերում ծառայության նշանակելու նպատակով վիճակահանությանը մասնակցում են միայն «Գերազանց» և/կամ «Լավ» գնահատական ստացած զորակոչիկները: «Անբավարար» գնահատական ստացած զորակոչիկների ծառայության վայրեր նշանակումն իրականացվում է ընդհանուր վիճակահանության շրջանակում: Գլխավոր շտաբի զինվորական նվագախմբում և զորամասերի նվագախմբերում ծառայության չեն կարող նշանակվել միաժամանակ զորակոչվող եղբայրները, եթե եղբայրները ցանկություն են հայտնել ծառայության նշանակվել միևնույն զորամասում և նրանցից մեկը չի մասնակցել լուսմներին կամ ստացել է «Անբավարար» գնահատական, ինչպես նաև այն զորակոչիկը, ում եղբայրը պարտադիր զինվորական ծառայություն է անցնում գլխավոր շտաբի զինվորական նվագախմբում կամ զորամասերի նվագախմբերում, սակայն զորակոչիկը չի մասնակցել լուսմներին կամ ստացել է «Անբավարար» գնահատական:

(10-րդ կետը լրաց. 28.12.18 N 17-Ն)

11. Լուսմների արդյունքներն արձանագրվում են: Արձանագրությունը ստորագրում են հանձնաժողովի բոլոր անդամները: Արձանագրությունը գլխավոր շտաբի պետի հաստատմանը ներկայացվում են լուսմների օրվան հաջորդող աշխատանքային 3-օրյա ժամկետում, իսկ բողոքարկման դիմումների առկայության դեպքում՝ 5-օրյա ժամկետում: Բողոքարկման արդյունքներով զորակոչիկի գնահատականը փոխվելու դեպքում փոփոխությունը ևս արձանագրվում է: Ընտրությանը մասնակցող զորակոչիկի ցանկությամբ իր մասով արձանագրության պատճենը տրամադրվում է վերջինիս: Իր մասով լուսմների վերջնական արդյունքների հետ համաձայն չլինելու դեպքում զորակոչիկը կարող է այն բողոքարկել գլխավոր շտաբի պետին: Բողոքի քննարկման ժամանակ նոր լուսմ չի անցկացվում, բողոքի վերաբերյալ որոշում կայացվում է լուսմների տեսաձայնագրության ուսումնասիրության արդյունքներով:

(11-րդ կետը լրաց. 28.12.18 N 17-Ն)

12. Գլխավոր շտաբի զինվորական նվագախմբի և զորամասերի նվագախմբերի թափուր հաստիքների համալրման վիճակահանությունն իրականացվում է գլխավոր շտաբի կազմգործակալության վարչության կողմից նշանակված միասնական օրը՝ հանրապետական հավաքակայանում:

13. Հաշվի առնելով երաժշտական գործիքների հարակից համատեղելիությունը, ներքոհիշյալ երաժշտական փողային գործիքների տիրապետող երաժիշտ մասնագետները թափուր հաստիքների համալրման վիճակահանությանը մասնակցում են նաև՝

- 1) գալարափողահարը՝ որպես ալտահար,
- 2) տենորահարը՝ որպես բարիտոնահար և հակառակը,
- 3) տրոմբոնահարը՝ որպես տենորահար կամ բարիտոնահար,
- 4) շեփորահարը՝ որպես ալտահար:

14. Գլխավոր շտաբի զինվորական նվագախմբի յուրաքանչյուր մասնագիտությամբ թափուր հաստիքների համալրման վիճակահանությանը մասնակցում են «Գերազանց» գնահատական ստացած զորակոչիկները, իսկ զորամասերի նվագախմբերի յուրաքանչյուր մասնագիտությամբ թափուր հաստիքների համալրման վիճակահանությանը՝ «Լավ» գնահատական ստացած զորակոչիկները: Ընդ որում, եթե տվյալ մասնագիտությամբ՝

1) «Գերազանց» գնահատական ստացածների թիվը համապատասխանում է գլխավոր շտաբի զինվորական նվագախմբի թափուր հաստիքների քանակին կամ պակաս է այդ քանակից, ապա նշված զորակոչիկները համարվում են վիճակահանությամբ նշանակված գլխավոր շտաբի զինվորական նվագախմբում,

2) եթե «Գերազանց» գնահատական ստացածների թիվն ավել է գլխավոր շտաբի զինվորական նվագախմբի թափուր հաստիքների քանակից, ապա գլխավոր շտաբի զինվորական նվագախմբի համալրման ենթակա հաստիքների վիճակահանության արկղում դրվում են վիճակահանությանը մասնակցող զորակոչիկների քանակին համապատասխանող թերթիկներ, որոնց մի մասում նշված է գլխավոր շտաբի զինվորական նվագախմբի համապատասխան հաստիքը, իսկ մնացած թերթիկներն առանց նշման են: Առանց նշման թերթիկ հանած զորակոչիկներն առանձին, մինչև «Լավ» գնահատական ստացածների վիճակահանության կազմակերպումը, մասնակցում են զորամասերի նվագախմբերում թափուր հաստիքների համալրման վիճակահանությանը,

3) սույն կետի 1-ին ենթակետում նախատեսված «Գերազանց» գնահատական ստացածների թիվը գլխավոր շտաբի զինվորական նվագախմբի թափուր հաստիքների քանակից պակաս լինելու դեպքում՝ չհամալրված հաստիքների մասով, ինչպես նաև եթե «Գերազանց» գնահատական չի ստացել ոչ մի զորակոչիկ, ապա գլխավոր շտաբի զինվորական նվագախմբի թափուր հաստիքների թերթիկներն ընդգրկվում են զորամասերի նվագախմբերում թափուր հաստիքների համալրման վիճակահանության արկղում: Եթե վիճակահանությանը մասնակցողների թիվը համապատասխանում է գլխավոր շտաբի զինվորական նվագախմբի և զորամասերի նվագախմբերի թափուր հաստիքների քանակին կամ պակաս է այդ քանակից, ապա վիճակահանության արկղում ներառվում են միայն համապատասխան հաստիքների նշումով թերթիկներ: Եթե վիճակահանությանը մասնակցողների թիվն ավել է գլխավոր շտաբի զինվորական նվագախմբի և զորամասերի նվագախմբերի թափուր հաստիքների քանակից, ապա վիճակահանության արկղում դրվում են վիճակահանությանը մասնակցող զորակոչիկների քանակին համապատասխանող թերթիկներ, որոնց մի մասում նշված են համապատասխան հաստիքները, իսկ մնացած թերթիկներն առանց որևէ նշման են: Առանց նշման թերթիկ հանած զորակոչիկները մասնակցում են զորամասերի համալրման ընդհանուր վիճակահանությանը:

(14-րդ կետը փոփ., լրաց. 28.12.18 N 17-Ն)

15. Գլխավոր շտաբի զինվորական նվագախմբում և զորամասերի նվագախմբերում ծառայության նշանակելու նպատակով վիճակահանությունն անցկացվում է սույն հրամանի հավելված 1-ի 4-րդ, 5-րդ և 6-րդ կետերի պահանջների համաձայն:

16. Զինվորական ծառայության ընթացքում շտաբի զինվորական նվագախմբում և զորամասերի նվագախմբերում ծառայության համար անհրաժեշտ պայմանները չբավարարող զինծառայողները կարող են «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջների համաձայն տեղափոխվել ծառայության այլ վայր:

(16-րդ կետը փոփ. 28.12.18 N 17-Ն)

(հավելվածը փոփ., լրաց. 28.12.18 N 17-Ն)

Հավելված N 6

ՀՀ պաշտպանության նախարարի

2018 թ. հունիսի 25-ի

N 8-Ն հրամանի

ԿԱՐԳ

ԱՐԴԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԽՄԲՈՒՄ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԶՈՐԱԿՈՉԻ ԵՆԹԱԿԱ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է հայտարարված զորակոչի ընթացքում զինված ուժերի կարիքների համար տեղեկատվական հաղորդակցային տեխնոլոգիաների և բարձր տեխնոլոգիաների մասնագետների (այսուհետ՝ զորակոչիկներ)՝ արդի տեխնոլոգիաների խմբում զինվորական ծառայության նշանակելու ընտրության պայմանները և հանձնաժողովի գործունեության կարգը:

2. Զորակոչիկների ընտրության նպատակով հանձնաժողովն անցկացնում է մրցույթ, որի տեղի և ժամի մասին, զորակոչի սկսվելու օրվան նախորդող 20-րդ օրից ոչ ուշ, իրազեկումն իրականացվում է պաշտպանության նախարարության պաշտոնական կայքում և լրատվամիջոցներով: Մրցույթին մասնակցել ցանկացող զորակոչիկները գրանցվում են atmk.mil.am կայքում, որի մասին տեղեկացնում են նաև իրենց հաշվառման վայրի տարածքային զինկոմիսարիատին: Տարածքային զինկոմիսարիատները ևս իրականացնում են մրցույթին մասնակցելու ցանկություն հայտնաձև անձանց հաշվառում, որի հիման վրա հաշվառված անձանց անվանացուցակները մրցույթի անցկացման օրվանից առնվազն երկու աշխատանքային օր առաջ ուղարկում են կապի և ԱԿՀ վարչության պետին:

(2-րդ կետը լրաց. 28.12.18 N 17-Ն)

3. Արդի տեխնոլոգիաների խմբում զինվորական ծառայության նշանակելու նպատակով անցկացվող ընտրությանը մասնակցելու նպատակով սույն կարգի 2-րդ կետի համաձայն չեն կարող հաշվառվել՝

1) պաշտպանական մարզատեխնիկական հասարակական կազմակերպությունում պաշտպանության նախարարության պատվերով ռազմահաշվառական մասնագիտություն ստացած զորակոչիկները,

2) ռազմաուսումնական հաստատությունների դիմորդները:

(3-րդ կետը փոփ. 28.12.18 N 17-Ն)

4. Զորակոչիկը մրցույթին մասնակցում է անձը հաստատող փաստաթղթով, առկայության դեպքում իր մոտ ունենալով՝ աշխատանքային կրճատ գործունեությունը (ռեզյումե), և այլ հավելյալ փաստաթղթեր (դիպլոմ, հավաստագրեր), ինչպես նաև տեղեկանք տարածքային զինկոմիսարիատից, որտեղ նշված լինի զորակոչիկի պիտանիությունը զինվորական ծառայությանը (եթե ունի սահմանափակումներ, ապա բոլոր հոդվածների նշումով), ռազմաուսումնական հաստատությունների դիմորդ և պաշտպանական մարզատեխնիկական հասարակական կազմակերպությունում դասընթացներ ավարտած չլինելու հանգամանքները,

5. Մրցույթի ողջ ընթացքը տեսաձայնագրվում է: Մրցույթին կարող են ներկա գտնվել նաև զորակոչիկների ծնողները կամ զորակոչիկի կողմից նշված այլ անձինք, սակայն յուրաքանչյուր զորակոչիկի մասով՝ 2 անձից ոչ ավելի, ինչպես նաև հասարակական կազմակերպություններից ներկայացուցիչներ և լրագրողներ, որի վերաբերյալ վերջիններս մինչև մրցույթը սկսվելը տեղեկացնում են հանձնաժողովի նախագահին:

6. Մրցույթի արդյունքներն արձանագրվում են: Արձանագրությունը ստորագրում են հանձնաժողովի բոլոր անդամները: Հանձնաժողովի նիստն իրավագոր է, եթե նիստին մասնակցում են հանձնաժողովի անդամների կեսից ավելին: Արձանագրությունը գլխավոր շտաբի պետի հաստատմանը ներկայացվում են մրցույթի օրվան հաջորդող 3 աշխատանքային օրվա ընթացքում, իսկ բողոքարկման դիմումների առկայության դեպքում՝ 5-օրյա ժամկետում: Բողոքարկման արդյունքներով զորակոչիկի գնահատականը փոխվելու դեպքում փոփոխությունը ևս արձանագրվում է: Մրցույթին մասնակցող զորակոչիկի ցանկությամբ իր մասով արձանագրության պատճենը տրամադրվում է վերջինիս: Իր մասով մրցույթի վերջնական արդյունքների հետ համաձայն չլինելու դեպքում զորակոչիկը կարող է այն բողոքարկել գլխավոր շտաբի պետին: Բողոքի քննարկման ժամանակ նոր մրցույթ չի անցկացվում, բողոքի վերաբերյալ որոշում

կայացվում է մրցույթի տեսաձայնագրության ուսումնասիրության արդյունքներով:

(6-րդ կետը լրաց. 28.12.18 N 17-Ն)

7. Հանձնաժողովի կողմից հարցազրույցի միջոցով իրականացվում է համապատասխան որակավորում՝ հետևյալ մասնագիտություններից.

- 1) ծրագրավորում,
- 2) կիբեռանվտանգություն,
- 3) ցանցային/համակարգային ադմինիստրացիա:

8. Մրցույթն անցկացվում է 2 փուլով: Յուրաքանչյուր փուլում բոլոր մասնագիտությունների համար սահմանվում են համապատասխան կատեգորիաներ, որոնցից ամեն մեկի համար մրցույթի մասնակիցը գնահատվում է սահմանված գնահատման սանդղակով: Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի գնահատականը յուրաքանչյուր գորակոչիկի համար ձևավորվում է բոլոր կատեգորիաներում նշանակված գնահատականների գումարով: Զորակոչիկի վերջնական գնահատականը ձևավորվում է համապատասխան մասնագիտության գնահատման հանձնաժողովի բոլոր անդամների նշանակված գնահատականների միջին թվաբանական գումարով:

9. Մրցույթի առաջին փուլում գորակոչիկները գնահատվում են ըստ ստորև ներկայացված կատեգորիաների՝ 20-բալանոց գնահատման սանդղակով.

- 1) Ծրագրավորում՝
 - ա. ծրագրավորման լեզվի իմացություն՝ մինչև 10 բալ.
 - բ. օբյեկտային կողմորոշմամբ ծրագրավորում (OOP)՝ մինչև 10 բալ.

- 2) Կիբեռանվտանգություն՝
 - ա. վեբ խոցելիություններ (SQLi, XSS, SSRF, CSRF, LFI, RFI...)՝ մինչև 10 բալ.
 - բ. ցանցային անվտանգություն՝ մինչև 10 բալ.

- 3) Ցանցային/համակարգային ադմինիստրացիա՝
 - ա. օպերացիոն համակարգեր՝ մինչև 10 բալ.
 - բ. երթուղիչների, կոմուտատորների աշխատանք՝ մինչև 10 բալ:

10. Առաջին փուլի արդյունքներով 12 և ավելի միավոր հավաքած գորակոչիկները անցնում են որակավորման երկրորդ փուլ, իսկ 12-ից ցածր միավոր հավաքած գորակոչիկները դուրս են մնում հետագա որակավորման փուլից:

11. Մրցույթի երկրորդ փուլում գորակոչիկները գնահատվում են 100-բալանոց գնահատման սանդղակով՝ ըստ ստորև ներկայացված կատեգորիաների.

- 1) Ծրագրավորում՝
 - ա. ծրագրավորման լեզվի իմացություն՝ մինչև 20 բալ.
 - բ. օբյեկտային կողմորոշված ծրագրավորում (OOP)՝ մինչև 20 բալ.

գ. սվյալների բազա, ցանցային ծրագրերի նախագծում (Client Server architecture), զուգահեռ ծրագրավորում (Multithreading, Synchronization)՝ մինչև 20 բալ.

- դ. ալգորիթմներ, սվյալների կառուցվածքներ, Frameworks, Libraries՝ մինչև 20 բալ.
- ե. պրակտիկ հմտությունների գնահատում՝ մինչև 20 բալ:

- 2) Կիբեռանվտանգություն՝
 - ա. վեբխոցելիություններ (SQLi, XSS, SSRF, CSRF, LFI, RFI...)՝ մինչև 20 բալ.
 - բ. գաղտնագրություն՝ մինչև 20 բալ.

- գ. ցանցային անվտանգություն՝ մինչև 20 բալ.
- դ. սոցիալական ինժեներիա՝ մինչև 20 բալ.
- ե. պրակտիկ հմտությունների գնահատում՝ մինչև 20 բալ:

- 3) Ցանցային/համակարգային ադմինիստրացիա՝
 - ա. վիրտուալիզացման համակարգեր՝ մինչև 20 բալ.
 - բ. սերվերների դեկավարման և մոնիթորինգի համակարգեր՝ մինչև 20 բալ.

գ. օպերացիոն համակարգերի իմացություն, ապարատային սերվերների կարգավորում և սպասարկում՝ մինչև 20 բալ.

- դ. երթուղիչների և կոմուտատորների, Firewall-ների աշխատանքի իմացություն՝ մինչև 20 բալ.
- ե. TCP/IP Model-ի և ցանցային ծառայությունների (DNS, FTP, NTP, Webserver, iSCSI, VPN և այլն) իմացություն՝ մինչև 20 բալ:

- 12. Երկրորդ փուլի արդյունքում՝
 - 1) 80 և ավելի բալեր հավաքած գորակոչիկները ստանում են որակավորման «C» կարգ,
 - 2) 80-ից ցածր բալեր հավաքած գորակոչիկները ստանում են որակավորման «B» կարգ:

13. Որակավորման «C» կարգ ստացած գորակոչիկները համարվում են վիճակահանությանը նշանակված կապի և ԱԿՀ վարչության Արդի տեխնոլոգիաների խումբ՝ եթե նրանց թիվը համապատասխանում է Արդի տեխնոլոգիաների խմբի թափուր հաստիքների քանակին կամ պակաս է այդ քանակից: Որակավորման «C» կարգ ստացած գորակոչիկների թիվը կապի և ԱԿՀ վարչության Արդի տեխնոլոգիաների խմբի թափուր հաստիքների քանակից ավելի լինելու դեպքում Արդի տեխնոլոգիաների խմբի համալրման ենթակա հաստիքների վիճակահանության արկղում դրվում են վիճակահանությանը մասնակցող գորակոչիկների քանակին համապատասխանող թերթիկներ, որոնց մի մասում նշված է

Արդի տեխնոլոգիաների խմբի համապատասխան հաստիքը, իսկ մնացած թերթիկներն առանց որևէ նշման են: Առանց նշման թերթիկ հանած, ինչպես նաև «B» կարգի որակավորում ստացած գորակոչիկները մասնակցում են զինված ուժերի կապի, հակաօդային պաշտպանության և հրետանու ուսումնական գորամասերի համալրման վիճակահանությանը՝ եթե նրանց առողջական վիճակը թույլ է տալիս նշանակվելու ուսումնական գորամասում կամ չի լրացել ուսումնական գորամասերի համալրման համար անհրաժեշտ քանակը: Առողջական վիճակի պատճառով ուսումնական գորամասեր ուղարկվելու ոչ ենթակա, ինչպես նաև ուսումնական գորամասերի համալրման համար անհրաժեշտ քանակը լրացած լինելու դեպքում գորակոչիկները մասնակցում են գորամասերի համալրման ընդհանուր վիճակահանությանը: Կապի և ԱԿՀ վարչության Արդի տեխնոլոգիաների խմբում ծառայության չեն կարող նշանակվել միաժամանակ գորակոչվող եղբայրները, եթե եղբայրները ցանկություն են հայտնել ծառայության նշանակվել մինչև գորամասում և նրանցից մեկը չի մասնակցել մրցույթին կամ չի ստացել որակավորման «C» կարգ, ինչպես նաև այն գորակոչիկը, ում եղբայրը պարտադիր զինվորական ծառայություն է անցնում Արդի տեխնոլոգիաների խմբում, սակայն գորակոչիկը չի մասնակցել մրցույթին կամ չի ստացել որակավորման «C» կարգ:

(13-րդ կետը խմբ. 28.12.18 N 17-Ն)

14. Զինվորական ծառայության ընթացքում արդի տեխնոլոգիաների խմբում ծառայության համար անհրաժեշտ պայմանները չբավարարող զինծառայողները կարող են «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջների համաձայն տեղափոխվել ծառայության այլ վայր:

(14-րդ կետը փոփ. 28.12.18 N 17-Ն)

(հավելվածը լրաց., փոփ., խմբ. 28.12.18 N 17-Ն)

Հավելված N 7

ՀՀ պաշտպանության նախարարի

2018 թ. հունիսի 25-ի

N 8-Ն հրամանի

ԿԱՐԳ

ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ (ԳԻՏԱԿԱՆ) ՎԱՇՏՈՒՄ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԶՈՐԱԿՈՉԻ ԵՆԹԱԿԱ ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է տեխնոլոգիական (գիտական) վաշտում զինվորական ծառայության նշանակվելու նպատակով հայտարարված շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության գորակոչի շրջանակներում գորակոչի ենթակա քաղաքացիների (այսուհետ՝ գորակոչիկներ) ընտրության պայմանները և հանձնաժողովի գործունեության կարգը:

2. Զորակոչիկների ընտրության նպատակով հանձնաժողովն անցկացնում է մրցույթ, որի տեղի և ժամկետի, վաշտի համալրման ենթակա հաստիքների քանակի մասին իրազեկումն իրականացվում է mil.am կայքում և լրատվամիջոցներով, գորակոչի սկսվելու օրվան նախորդող 20-րդ օրից ոչ ուշ: Մրցույթին կարող են մասնակցել առնվազն բակալավրի կրթական ծրագրով ավարտական վկայական ունեցող գորակոչիկները, որոնք գրանցվում են mil.am կայքում լրացնելով համապատասխան հայտը, որի մասին տեղեկացնում են նաև իրենց հաշվառման վայրի տարածքային զինկոմիսարիատին: Տարածքային զինկոմիսարիատները ևս իրականացնում են մրցույթին մասնակցելու ցանկություն հայտնած անձանց հաշվառում, որի հիման վրա հաշվառված անձանց անվանացուցակները մրցույթի անցկացման օրվանից առնվազն երկու աշխատանքային օր առաջ ուղարկում են մրցույթային հանձնաժողովի նախագահին: Անվանացուցակների հետ միասին ներկայացվում են նաև գորակոչիկների անձը հաստատող փաստաթղթի պատճենը, համապատասխան բարձրագույն կրթության ավարտական վկայականի պատճենները կամ, եթե առկա չէ՝ ավարտական վկայական, համապատասխան բարձրագույն ուսումնական հաստատության կողմից տրված տեղեկանքը՝ ավարտական քննությունները հանձնած լինելու վերաբերյալ, ինքնակենսագրությունը, զինվորական ծառայությանը առողջական վիճակի պատճառով պիտանիության աստիճանի (պիտանի կամ սահմանափակ պիտանի) վերաբերյալ տեղեկանքը: Զորակոչիկը մրցույթին ներկայանալիս իր հետ պետք է ունենա անձը հաստատող փաստաթուղթ, իսկ mil.am կայքում գրանցված լինելու դեպքում՝ նաև սույն կետով նախատեսված այլ փաստաթղթերը:

(2-րդ կետը լրաց. 28.12.18 N 17-Ն)

3. Տեխնոլոգիական (գիտական) վաշտում զինվորական ծառայության նշանակվելու նպատակով անցկացվող ընտրությանը մասնակցելու նպատակով սույն կարգի 2-րդ կետի համաձայն չեն կարող հաշվառվել

- 1) պաշտպանական մարզատեխնիկական հասարակական կազմակերպությունում ՀՀ պաշտպանության նախարարության պատվերով ռազմահաշվառական մասնագիտություն ստացած գորակոչիկները,
- 2) ռազմաուսումնական հաստատությունների դիմորդները:

(3-րդ կետը փոփ. 28.12.18 N 17-Ն)

4. Մրցույթի ողջ ընթացքը տեսաձայնագրվում է: Մրցույթի 2-րդ և 3-րդ փուլերին, դիտորդի կարգավիճակով, կարող են ներկա լինել նաև գորակոչիկների ծնողները կամ գորակոչիկի կողմից նշված այլ անձինք, բայց ոչ ավելի, քան 2 անձ՝ մրցույթի մասնակից յուրաքանչյուր գորակոչիկի մասով, ինչպես նաև ներկայացուցիչներ հասարակական կազմակերպություններից և/կամ լրատվամիջոցներից: Մրցութային հանձնաժողովի և ենթահանձնաժողովների նիստերն իրավագոր են, եթե դրանց մասնակցում են հանձնաժողովի և/կամ ենթահանձնաժողովների անդամների կեսից ավելին:

5. Մրցույթն անցկացվում է երեք փուլով:

6. Մրցույթի 1-ին փուլ. տրամաբանական թեստ (100-միավորանոց), որը անցկացնում է թեստավորման ենթահանձնաժողովը: Թեստի արդյունքում առնվազն 60 միավոր հավաքած մասնակիցները անցնում են մրցույթի հաջորդ փուլ: **(նախադասությունը հանվել է 28.12.18 N 17-Ն)** Այս փուլը հաղթահարած մասնակիցների արդյունքները բաժանվում են 10-ի և ենթահանձնաժողովի բոլոր անդամների ստորագրությամբ փոխանցվում է հանձնաժողովին:

(6-րդ կետը փոփ. 28.12.18 N 17-Ն)

7. Թեստավորման փուլը տևում է 4 օր, որից.

1) օր առաջին՝ թեստի անցկացում,

2) օր երկրորդ՝ թեստի արդյունքների հրապարակում mil.am կայքում և թեստի անցկացման վայրում փակցված ցուցակով, որից հետո 24 ժամվա ընթացքում մրցույթի մասնակից գորակոչիկները իրավունք ունեն բողոքարկել ստացված արդյունքները՝ հանձնաժողովի նախագահին: Բողոքարկման դիմումի ձևը հրապարակվում է mil.am կայքում,

3) օր երրորդ՝ հանձնաժողովի նախագահը բողոքարկման դիմումների հիման վրա, մրցույթի մասնակից գորակոչիկի ներկայությամբ կազմակերպում է նրա թեստի կրկնակի ստուգում, որի վերաբերյալ կազմվում է համապատասխան արձանագրություն՝ հանձնաժողովի նախագահի և թեստավորման ենթահանձնաժողովի անդամների ստորագրությամբ,

4) օր չորրորդ՝ փուլի վերջնական արդյունքները, ներառյալ բողոքարկման, հրապարակվում են mil.am կայքում և թեստի անցկացման վայրում փակցված ցուցակով:

8. Մրցույթի 2-րդ փուլ. մասնագիտական քննություն-հարցազրույց՝ բանավոր, ընդունում են մասնագիտական ենթահանձնաժողովները՝ հետևյալ առարկաներից.

- ա. ֆիզիկա,
- բ. ռադիոֆիզիկա,
- գ. ռադիոտեխնիկա,
- դ. քիմիա,
- ե. թվային տեխնոլոգիաներ (կառավարման և տեղեկատվական),
- զ. ռոբոտատեխնիկա,
- է. անօդաչու թռչող սարքերի,
- ը. մեքենաշինություն,
- թ. սարքաշինություն,
- ժ. օպտոէլեկտրոնիկա:

(8-րդ կետը խմբ. 28.12.18 N 17-Ն, 01.07.19 N 7-Ն)

9. Մրցույթի մասնակից գորակոչիկն ինքն է ընտրում մասնագիտական քննություն-հարցազրույցի ժամանակ վերը նշված մասնագիտություններից կամ գիտության ճյուղի որ ուղղությունից է քննություն հանձնելու՝ այդ մասին նախապես նշում կատարելով մրցույթին մասնակցության հայտում: Ենթահանձնաժողովի յուրաքանչյուր անդամ մրցույթի մասնակից յուրաքանչյուր գորակոչիկի կարող է առավելագույնը երեք հարց (խնդիր) տալ: Այս փուլը գնահատվում է 10-բալանոց համակարգով: Ենթահանձնաժողովի յուրաքանչյուր անդամը մրցույթի մասնակից յուրաքանչյուր գորակոչիկի գնահատականների ամփոփաթեթին իր ստորագրությամբ փոխանցում է հանձնաժողովի նախագահին: Հանձնաժողովը հաշվում է մրցույթի յուրաքանչյուր մասնակից գորակոչիկի քննություն-հարցազրույցի գնահատականների միջին թվաբանականը և բազմապատկում 1.5 գործակցով: 9 և ավելի միավոր հավաքածներն ընդգրկվում են 3-րդ փուլի մասնակիցների ընտրությանը: Երրորդ փուլի անցողիկ շեմի մասին իրազեկումը և մասնակիցների ցուցակը տեղադրվում է mil.am կայքում և փակցվում քննության անցկացման վայրում՝ արդյունքների ամփոփումից անմիջապես հետո:

10. Մասնագիտական քննություն-հարցազրույց փուլը տևում է 3 օր, որից.

1) օր առաջին՝ քննության անցկացում և գնահատականների հրապարակում mil.am կայքում և քննության անցկացման վայրում փակցված ցուցակով, որից հետո 24 ժամվա ընթացքում մրցույթի մասնակից գորակոչիկները իրավունք ունեն բողոքարկել ստացված արդյունքները՝ հանձնաժողովի նախագահին: Բողոքարկման դիմումի ձևը հրապարակվում է mil.am կայքում,

2) օր երկրորդ՝ հանձնաժողովի նախագահը բողոքարկման դիմումների հիման վրա, մրցույթի մասնակից գորակոչիկի ներկայությամբ, կազմակերպում է նրա քննության տեսաձայնագրության դիտում, որի վերաբերյալ կազմվում է համապատասխան արձանագրություն՝ հանձնաժողովի նախագահի և տվյալ ենթահանձնաժողովի անդամների ստորագրությամբ,

3) օր երրորդ՝ փուլի վերջնական արդյունքների, ներառյալ բողոքարկման, հրապարակում mil.am կայքում և քննության անցկացման վայրում փակցված ցուցակով:

11. Մրցույթի 3-րդ փուլ. հարցազրույց, որն անցկացնում է հանձնաժողովը: Այս փուլում հանձնաժողովի անդամները միասին հարցազրույց են անցկացնում մրցույթի յուրաքանչյուր մասնակից գորակոչիկի հետ ու առանց քննարկման

առանձին գնահատում: Փուլի գնահատականները ձևավորվում են հանձնաժողովի անդամների նշանակած անհատական գնահատականների միջին թվաբանականների հաշվարկով: Մրցույթի այս փուլով գնահատվում են մրցույթի մասնակից գորակոչիկների հետևյալ ունակությունները (կարողությունները):

- 1) կոլեկտիվում աշխատելու ունակությունները և փորձը.
- 2) ստեղծագործական ունակությունները:

12. Սույն կարգի 11-րդ կետում նախատեսված ունակություններից (կարողություններից) յուրաքանչյուրը գնահատվում է 1-ից 5-բալանոց համակարգով: Փուլը հաղթահարում է մրցույթի մասնակից այն գորակոչիկը, ում գնահատականների միջին թվաբանականի գումարը կկազմի առնվազն 6: Գնահատականները որոշվում են հետևյալ կերպ. հանձնաժողովի անդամներից յուրաքանչյուրի կողմից տվյալ գորակոչիկին նշանակված գնահատականներից երկու ամենաբարձր և երկու ամենացածր գնահատականները հաշվի չեն առնվում և հաշվվում են մնացած գնահատականների միջին թվաբանականները՝ հարյուրերորդականի ճշտությամբ: Մրցույթի երրորդ փուլի արդյունքների վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որը ստորագրում են հանձնաժողովի բոլոր անդամները:

13. Մրցույթի ավարտից հետո հանձնաժողովն ամփոփում է արդյունքները՝ գումարելով երեք փուլերի գնահատականները և նույն օրն իրազեկում մրցույթի մասնակից գորակոչիկներին իրենց հավաքած ընդհանուր միավորների մասին: Տեխնոլոգիական (գիտական) վաշտում, բացառությամբ 15-րդ կետում նշված դեպքի, զինվորական ծառայության նշանակվելու իրավունք են ստանում այն գորակոչիկները, որոնք մրցույթի երեք փուլերի արդյունքում հավաքում են ամենաբարձր միավորները: Տեխնոլոգիական (գիտական) վաշտում զինվորական ծառայության չեն կարող նշանակվել միաժամանակ գորակոչվող եղբայրները, եթե եղբայրները ցանկություն են հայտնել ծառայության նշանակվել միևնույն գորամասում և նրանցից մեկը չի մասնակցել մրցույթին կամ մրցույթի երեք փուլերի արդյունքում չի հավաքել տեխնոլոգիական (գիտական) վաշտում զինվորական ծառայության նշանակվելու համար անհրաժեշտ միավորները, ինչպես նաև այն գորակոչիկը, ում եղբայրը պարտադիր զինվորական ծառայություն է անցնում տեխնոլոգիական (գիտական) վաշտում, սակայն գորակոչիկը չի մասնակցել մրցույթին կամ չի հավաքել տեխնոլոգիական (գիտական) վաշտում զինվորական ծառայության նշանակվելու համար անհրաժեշտ միավորները:

(13-րդ կետը լրաց. 28.12.18 N 17-Ն)

14. Հանձնաժողովը մրցույթի արդյունքների հիման վրա կազմում է այն գորակոչիկների անվանացուցակը, ովքեր իրավունք են ստացել զինվորական ծառայության նշանակվելու տեխնոլոգիական (գիտական) վաշտում և ներկայացնում է պաշտպանության նախարարի հաստատմամբ: Մրցույթին մասնակցող գորակոչիկի ցանկությամբ իր մասով արձանագրության պատճենը տրամադրվում է վերջինիս: Իր մասով մրցույթի վերջնական արդյունքների հետ համաձայն չլինելու դեպքում գորակոչիկը կարող է այն բողոքարկել պաշտպանության նախարարին: Բողոքի քննարկման ժամանակ նոր մրցույթ չի անցկացվում, բողոքի վերաբերյալ որոշում կայացվում է մրցույթի տեսաձայնագրության ուսումնասիրության արդյունքներով:

(14-րդ կետը լրաց. 28.12.18 N 17-Ն)

15. Տեխնոլոգիական (գիտական) վաշտում զինվորական ծառայության նշանակվողների մասնագիտական քանակային համամասնությունն ապահովելու նպատակով յուրաքանչյուր մասնագիտությունից ծառայության է նշանակվում տվյալ գորակոչի համար նախատեսված ընդհանուր հաստիքների քանակի 40%-ից ոչ ավելին: Այս դեպքում հնարավոր է, որ մի մասնագիտությունից մրցույթը հաղթահարած, ավելի ցածր միավոր հավաքած մասնակից գորակոչիկը ծառայության անցնի տեխնոլոգիական (գիտական) վաշտում, իսկ նրանից բարձր միավոր ունեցող այլ մասնագիտության 40%-ից դուրս մնացածը չնշանակվի: Վաշտի չհամալրված հաստիքները այլ մասնագիտության 40%-ից դուրս մնացած գորակոչիկներով չեն համալրվում:

(15-րդ կետը փոփ. 28.12.18 N 17-Ն, 01.07.19 N 7-Ն)

16. Այն դեպքում, երբ որևէ մասնագիտության գծով նախատեսված տեղերի ընդհանուր քանակից ավելի թվով մրցույթի մասնակից գորակոչիկներ հավաքում են հավասար միավորներ, ապա, հաշվի առնելով սույն կարգի 15-րդ կետի պահանջները, նրանց միջև անցկացվում է վիճակահանություն՝ սույն հրամանի հավելված 1-ի 4-րդ, 5-րդ և 6-րդ կետերի պահանջների համաձայն:

17. Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 451-Ն որոշման հիման վրա գիտության և կրթության բնագավառներում նշանակալի նվաճումների համար տարկետում ստացած ու տարկետման ժամկետի ավարտից հետո պարտադիր զինվորական ծառայության գորակոչի ենթակա և տեխնոլոգիական (գիտական) վաշտի համալրման մրցույթին մասնակցած գորակոչիկները, սույն կարգով սահմանված այլ հավասար պայմանների ապահովման դեպքում՝ օգտվում են տեխնոլոգիական (գիտական) վաշտում զինվորական ծառայության նշանակվելու նախապատվության իրավունքից:

18. Զինվորական ծառայության ընթացքում տեխնոլոգիական (գիտական) վաշտում ծառայության համար անհրաժեշտ պայմանները չբավարարող զինծառայողները կարող են «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջների համաձայն տեղափոխվել ծառայության այլ վայր:

(18-րդ կետը փոփ. 28.12.18 N 17-Ն)

(հավելվածը լրաց. փոփ., խմբ. 28.12.18 N 17-Ն, խմբ., փոփ. 01.07.19 N 7-Ն)

ԿԱՐԳ

ՄԱՐԶԱԿԱՆ ՎԱՇՏՈՒՄ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԶՈՐԱԿՈՉԻ ԵՆԹԱԿԱ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է մարզական վաշտում ծառայության նշանակելու նպատակով հայտարարված շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության գորակոչի շրջանակներում գորակոչի ենթակա քաղաքացիների (այսուհետև՝ գորակոչիկներ) ընտրության պայմանները և հանձնաժողովի գործունեության կարգը:

2. Զորակոչիկների ընտրության նպատակով հանձնաժողովն անցկացնում է նիստ, որի տեղի և ժամկետի, վաշտի համալրման ենթակա հաստիքների քանակի մասին իրազեկումն իրականացվում է mil.am կայքում և լրատվամիջոցներով: Սույն կարգի համաձայն մարզական վաշտում ծառայության նշանակվելու նպատակով մրցույթին մասնակցելու համար սպորտի բնագավառում գործունեություն իրականացնող քաղաքացին, իսկ թիմային մարզաձևերի շրջանակներում՝ համապատասխան մարզաձևի ազգային ֆեդերացիայի նախագահը, կարող են մինչև գորակոչը սկսվելու օրվան նախորդող 20-րդ օրը գրանցվել mil.am կայքում՝ լրացնելով համապատասխան հայտը, և այդ մասին հայտնելով նաև քաղաքացու հաշվառման վայրի տարածքային զինկոմիսարիատ: Տարածքային զինկոմիսարիատները ևս իրականացնում են մրցույթին մասնակցելու ցանկություն հայտնած անձանց հաշվառում, որի հիման վրա հաշվառված անձանց անվանացուցակները մրցույթի անցկացման օրվանից առնվազն երկու աշխատանքային օր առաջ ուղարկում են մրցութային հանձնաժողովի նախագահին, դրանց կցելով նաև գորակոչիկների անձը հաստատող փաստաթղթի պատճենը, համապատասխան ֆեդերացիայի կողմից տրված մարզական ցուցանիշները հաստատող և Հայաստանի Հանրապետության համապատասխան հավաքականի անդամությունը հավաստող տեղեկանքները, ինքնակենսագրությունը, զինվորական ծառայությանն առողջական վիճակի պատճառով պիտանիության աստիճանի (պիտանի կամ սահմանափակ պիտանի) վերաբերյալ տեղեկանքը:

3. Մարզական վաշտում ծառայության նշանակվելու իրավունքից օգտվում են հետևյալ մարզական ցուցանիշներ ունեցող քաղաքացիները.

1) գորակոչը սկսվելու օրվան նախորդող 4 տարվա ընթացքում օլիմպիական մարզաձևերի աշխարհի կամ Եվրոպայի առաջնություններում (մեծահասակների, կամ երիտասարդների, կամ պատանիների), կամ օլիմպիական խաղերում, կամ Եվրոպական խաղերում, կամ պատանեկան օլիմպիական խաղերում, կամ համաշխարհային ուսանողական մարզական խաղերում, կամ ռազմական սպորտի միջազգային խորհրդի համաշխարհային խաղերում (աշխարհի առաջնություններում) 1-ից 5-րդ տեղերը գրաված ու առնվազն մեկ հաղթանակ տարած կամ առաջիկա օլիմպիական, կամ պատանեկան օլիմպիական խաղերի մասնակցության վարկանիշ ձեռք բերած մարզիկները,

2) գորակոչի սկսվելու օրվան նախորդող 3 տարվա ընթացքում ատլետիկա, լող, ջրացատկ, կողմնորոշում, ռազմական հնգամարտ, թենիս, սեղանի թենիս, հեծանվային սպորտ, հրաձգություն, նետաձգություն, սուսերամարտ և թիավարություն մարզաձևերում (մեծահասակների, կամ երիտասարդների, կամ պատանիների) օլիմպիական խաղերում, կամ Եվրոպական խաղերում, կամ պատանեկան օլիմպիական խաղերում, կամ համաշխարհային ուսանողական մարզական խաղերում, կամ ռազմական սպորտի միջազգային խորհրդի համաշխարհային խաղերում (աշխարհի առաջնություններում) 1-ից 8-րդ տեղերը գրաված ու առնվազն մեկ հաղթանակ տարած, կամ ատլետիկա մարզաձևում փոքր երկրների Եվրոպայի առաջնությանը, կամ Բալկանյան երկրների առաջնությանը 1-ից 3-րդ տեղը գրաված մարզիկները: Սույն ենթակետով նախատեսված պայմանը կիրառելիս՝ թենիս մարզաձևում Դևիսի գավաթի խաղարկությունը հավասարեցվում է մեծահասակների աշխարհի առաջնությանը, իսկ Եվրոպայի գավաթի խաղարկությունը հավասարեցվում է Եվրոպայի մեծահասակների առաջնությանը,

3) գորակոչը սկսվելու օրվան նախորդող 3 տարվա ընթացքում սամբո, շախմատ մարզաձևերի աշխարհի կամ Եվրոպայի մեծահասակների, կամ երիտասարդների, կամ պատանիների առաջնությունում, կամ Եվրոպական խաղերում, կամ համաշխարհային ուսանողական մարզական խաղերում, կամ շախմատի համաշխարհային պատանեկան օլիմպիադայում 1-ից 3-րդ տեղերը գրաված ու առնվազն մեկ հաղթանակ տարած մարզիկները, կամ շախմատի համաշխարհային օլիմպիադայում 1-ից 5-րդ տեղերը գրաված ու առնվազն մեկ հաղթանակ տարած մարզիկները,

4) Հայաստանի ֆուտբոլի, բասկետբոլի կամ վոլեյբոլի ազգային հավաքականների (պատանեկան, երիտասարդական և մեծահասակների) անդամ հանդիսացող մարզիկները:

4. Հանձնաժողովի նիստն իրավագոր է, եթե նիստին մասնակցում են հանձնաժողովի անդամների կեսից ավելին: Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ գորակոչիկին գնահատում է զինված ուժերի գլխավոր շտաբի վարչական սպարաոտի ղեկավարի կողմից կնքված և հաստատված գնահատման ձևաթերթիկի վրա «Համապատասխանում է պայմաններին» կամ «Չի համապատասխանում պայմաններին» գրառում կատարելու և ստորագրելու միջոցով: Մարզական վաշտում ծառայության նշանակելու ընտրված են համարվում այն գորակոչիկները, որոնց գնահատման

ձևաթերթիկում հանձնաժողովի բոլոր անդամները կատարել են «Համապատասխանում է պայմաններին» գրառումը և ստորագրել են: Հանձնաժողովի կողմից մարզական վաշտում ծառայության նշանակելու նպատակով ընտրության անցկացման գործընթացն արձանագրվում է: Արձանագրությունը ստորագրում են հանձնաժողովի բոլոր անդամները: Արձանագրությունը ներկայացվում է գլխավոր շտաբի պետի հաստատմանը և 3-օրյա ժամկետում հրապարակվում mil.am կայքում: Զորակոչիկի ցանկությամբ իրեն վերաբերող մասով արձանագրության պատճենը տրամադրվում է վերջինիս: Իրեն վերաբերող մասով հանձնաժողովի կայացրած որոշման արդյունքների հետ համաձայն չլինելու դեպքում զորակոչիկը հրապարակումից հետո 3-օրյա ժամկետում կարող է այն բողոքարկել գլխավոր շտաբի պետին:

5. Եթե մարզական վաշտում ծառայության նշանակելու նպատակով ընտրված զորակոչիկների թիվը համապատասխանում է մարզական վաշտի թափուր հաստիքների քանակին կամ պակաս է այդ քանակից, ապա նշված զորակոչիկները համարվում են նշանակված մարզական վաշտում: Եթե ընտրված զորակոչիկների թիվն ավելի է մարզական վաշտի թափուր հաստիքների քանակից, ապա ընտրությունն անցկացվում է 2-րդ փուլով:

6. Մարզական վաշտում ծառայության նշանակելու նպատակով ընտրված զորակոչիկների միջև ընտրության 2-րդ փուլը նախատեսում է սույն կարգի 3-րդ կետով նշված մարզական ցուցանիշների դասակարգմամբ առավել բարձրակարգ մարզիկների ընտրություն: Ընտրության 2-րդ փուլում առաջնահերթությունը տրվում է ըստ հետևյալ մարզական ցուցանիշների.

- 1) օլիմպիական խաղերում 1-ին՝ տեղ,
- 2) շախմատի աշխարհի չեմպիոն,
- 3) օլիմպիական խաղերում՝ 2-րդ տեղ,
- 4) օլիմպիական մարզաձևերի աշխարհի առաջնության կամ համաշխարհային շախմատային օլիմպիադայում՝ 1-ին տեղ,
- 5) օլիմպիական խաղերում՝ 3-րդ տեղ,
- 6) ռազմական սպորտի միջազգային խորհրդի համաշխարհային խաղերում՝ 1-ին տեղ,
- 7) օլիմպիական մարզաձևերի աշխարհի առաջնության կամ համաշխարհային շախմատային օլիմպիադայում՝ 2-րդ տեղ,
- 8) ռազմական սպորտի միջազգային խորհրդի համաշխարհային խաղերում՝ 2-րդ տեղ,
- 9) օլիմպիական մարզաձևերի աշխարհի առաջնության կամ համաշխարհային շախմատային օլիմպիադայում՝ 3-րդ տեղ,
- 10) ռազմական սպորտի միջազգային խորհրդի համաշխարհային խաղերում՝ 3-րդ տեղ,
- 11) օլիմպիական մարզաձևերի երիտասարդների աշխարհի առաջնության կամ պատանեկան օլիմպիական խաղերում՝ 1-ին տեղ,
- 12) օլիմպիական մարզաձևերի Եվրոպայի առաջնությունում, եվրոպական խաղերում, համաշխարհային ռուսանոդական մարզական խաղերում՝ 1-ին տեղ,
- 13) օլիմպիական խաղերում՝ 4-րդ տեղ,
- 14) օլիմպիական խաղերում՝ 5-րդ տեղ,
- 15) ոչ օլիմպիական մարզաձևերի աշխարհի առաջնությունում՝ 1-ին տեղ,
- 16) օլիմպիական մարզաձևերի Եվրոպայի առաջնությունում, եվրոպական խաղերում, համաշխարհային ռուսանոդական մարզական խաղերում՝ 2-րդ տեղ,
- 17) օլիմպիական կամ պատանեկան օլիմպիական խաղերին մասնակցության վարկանիշի ձեռքբերում,
- 18) օլիմպիական մարզաձևերի աշխարհի առաջնությունում կամ համաշխարհային շախմատային օլիմպիադայում՝ 4-րդ տեղ,
- 19) օլիմպիական մարզաձևերի աշխարհի առաջնությունում կամ համաշխարհային շախմատային օլիմպիադայում՝ 5-րդ տեղ,
- 20) ռազմական սպորտի միջազգային խորհրդի համաշխարհային խաղերում կամ աշխարհի առաջնությունում՝ 4-րդ տեղ,
- 21) ռազմական սպորտի միջազգային խորհրդի համաշխարհային խաղերում կամ աշխարհի առաջնությունում՝ 5-րդ տեղ,
- 22) ոչ օլիմպիական մարզաձևերի աշխարհի առաջնությունում՝ 2-րդ տեղ,
- 23) օլիմպիական մարզաձևերի երիտասարդների աշխարհի առաջնությունում կամ պատանեկան օլիմպիական խաղերում՝ 2-րդ տեղ,
- 24) ոչ օլիմպիական մարզաձևերի Եվրոպայի առաջնությունում, եվրոպական խաղերում, համաշխարհային ռուսանոդական մարզական խաղերում՝ 1-ին տեղ,
- 25) օլիմպիական մարզաձևերի Եվրոպայի առաջնությունում, եվրոպական խաղերում, համաշխարհային ռուսանոդական մարզական խաղերում՝ 3-րդ տեղ,
- 26) ոչ օլիմպիական մարզաձևերի աշխարհի առաջնությունում՝ 3-րդ տեղ,
- 27) օլիմպիական մարզաձևերի երիտասարդների աշխարհի առաջնությունում կամ պատանեկան օլիմպիական խաղերում՝ 3-րդ տեղ,
- 28) օլիմպիական մարզաձևերի երիտասարդների Եվրոպայի առաջնությունում, մինչև 23 տարեկան երիտասարդների Եվրոպայի առաջնությունում՝ 1-ին տեղ,

- 29) օլիմպիական մարզաձևերի երիտասարդների աշխարհի առաջնությունում կամ պատանեկան օլիմպիական խաղերում՝ 4-րդ տեղ,
 - 30) օլիմպիական մարզաձևերի երիտասարդների աշխարհի առաջնությունում կամ պատանեկան օլիմպիական խաղերում՝ 5-րդ տեղ,
 - 31) ոչ օլիմպիական մարզաձևերի երիտասարդների աշխարհի առաջնությունում՝ 1-ին տեղ,
 - 32) օլիմպիական մարզաձևերի երիտասարդների աշխարհի առաջնությունում կամ պատանեկան օլիմպիական խաղերում՝ 3-րդ տեղ,
 - 33) ոչ օլիմպիական մարզաձևերի Եվրոպայի առաջնությունում, եվրոպական խաղերում, համաշխարհային ուսանողական մարզական խաղերում՝ 2-րդ տեղ,
 - 34) օլիմպիական մարզաձևերի պատանիների աշխարհի առաջնությունում՝ 1-ին տեղ,
 - 35) ոչ օլիմպիական մարզաձևերի Եվրոպայի առաջնությունում, եվրոպական խաղերում, համաշխարհային ուսանողական մարզական խաղերում՝ 3-րդ տեղ,
 - 36) օլիմպիական մարզաձևերի երիտասարդների Եվրոպայի առաջնությունում, մինչև 23 տարեկան երիտասարդների Եվրոպայի առաջնությունում՝ 2-րդ տեղ,
 - 37) ոչ օլիմպիական մարզաձևերի երիտասարդների աշխարհի առաջնությունում՝ 2-րդ տեղ,
 - 38) ոչ օլիմպիական մարզաձևերի երիտասարդների աշխարհի առաջնությունում՝ 3-րդ տեղ,
 - 39) օլիմպիական մարզաձևերի պատանիների Եվրոպայի առաջնությունում՝ 1-ին տեղ,
 - 40) օլիմպիական մարզաձևերի Եվրոպայի առաջնությունում, Եվրոպական խաղերում, համաշխարհային ուսանողական մարզական խաղերում՝ 4-րդ տեղ,
 - 41) օլիմպիական մարզաձևերի Եվրոպայի առաջնությունում, եվրոպական խաղերում, համաշխարհային ուսանողական մարզական խաղերում՝ 5-րդ տեղ,
 - 42) ոչ օլիմպիական մարզաձևերի պատանիների աշխարհի առաջնությունում՝ 1-ին տեղ,
 - 43) ոչ օլիմպիական մարզաձևերի երիտասարդների Եվրոպայի առաջնությունում, մինչև 23 տարեկան երիտասարդների Եվրոպայի առաջնությունում՝ 1-ին տեղ,
 - 44) օլիմպիական մարզաձևերի պատանիների աշխարհի առաջնությունում՝ 2-րդ տեղ,
 - 45) օլիմպիական մարզաձևերի երիտասարդների Եվրոպայի առաջնությունում, մինչև 23 տարեկան երիտասարդների Եվրոպայի առաջնությունում՝ 3-րդ տեղ,
 - 46) օլիմպիական մարզաձևերի պատանիների Եվրոպայի առաջնությունում՝ 2-րդ տեղ,
 - 47) ոչ օլիմպիական մարզաձևերի պատանիների աշխարհի առաջնությունում 2-րդ տեղ,
 - 48) ոչ օլիմպիական մարզաձևերի երիտասարդների Եվրոպայի առաջնությունում, մինչև 23 տարեկան երիտասարդների Եվրոպայի առաջնությունում՝ 2-րդ տեղ,
 - 49) օլիմպիական մարզաձևերի պատանիների Եվրոպայի առաջնությունում 3-րդ տեղ,
 - 50) ռազմական սպորտի միջազգային խորհրդի համաշխարհային խաղերում աշխարհի առաջնությունում, օլիմպիական մարզաձևերի Եվրոպայի առաջնությունում, եվրոպական խաղերում, համաշխարհային ուսանողական մարզական խաղերում՝ 6-րդ տեղ,
 - 51) ռազմական սպորտի միջազգային խորհրդի համաշխարհային խաղերում, աշխարհի առաջնությունում, օլիմպիական մարզաձևերի Եվրոպայի առաջնությունում, եվրոպական խաղերում, համաշխարհային ուսանողական մարզական խաղերում՝ 7-րդ տեղ,
 - 52) ռազմական սպորտի միջազգային խորհրդի համաշխարհային խաղերում, աշխարհի առաջնությունում, օլիմպիական մարզաձևերի Եվրոպայի առաջնությունում, եվրոպական խաղերում, համաշխարհային ուսանողական մարզական խաղերում՝ 8-րդ տեղ,
 - 53) ատլետիկայի փոքր երկրների Եվրոպայի առաջնությունում, բալկանյան երկրների առաջնությունում՝ 1-ին տեղ,
 - 54) ատլետիկայի փոքր երկրների Եվրոպայի առաջնությունում, բալկանյան երկրների առաջնությունում՝ 2-րդ տեղ
 - 55) ատլետիկայի փոքր երկրների Եվրոպայի առաջնությունում, բալկանյան երկրների առաջնությունում՝ 3-րդ տեղ
 - 56) ոչ օլիմպիական մարզաձևերի պատանիների Եվրոպայի առաջնությունում՝ 1-ին տեղ,
 - 57) ոչ օլիմպիական մարզաձևերի պատանիների աշխարհի առաջնությունում՝ 3-րդ տեղ,
 - 58) ոչ օլիմպիական մարզաձևերի երիտասարդների Եվրոպայի առաջնությունում, մինչև 23 տարեկան երիտասարդների Եվրոպայի առաջնությունում՝ 3-րդ տեղ,
 - 59) ոչ օլիմպիական մարզաձևերի պատանիների աշխարհի առաջնությունում՝ 3-րդ տեղ,
 - 60) ոչ օլիմպիական մարզաձևերի պատանիների Եվրոպայի առաջնությունում՝ 2-րդ տեղ,
 - 61) ոչ օլիմպիական մարզաձևերի պատանիների Եվրոպայի առաջնությունում՝ 3-րդ տեղ:
7. Խաղային մարզաձևերում մարզիկների ընտրությունը կատարվում է՝ հաշվի առնելով նրանց խաղային դիրքը:
8. Ընտրությունը չանցած գորակոչիկները մասնակցում են գորամասերի համալրման ընդհանուր վիճակահանությանը:
9. Մարզական վաշտում ծառայության կարող են տեղափոխվել նաև սույն կարգի պահանջները բավարարող և պարտադիր ժամկետային զինվորական ծառայության մեջ գտնվող զինծառայողները, որոնց ընտրությունը կատարվում է սույն կարգի համաձայն:
10. Զինված ուժերում ծառայող պարտադիր ժամկետային զինծառայողների ընտրությունը մարզական վաշտ

տեղափոխվելու նպատակով իրականացվում է սույն կարգի 5-ից 7-րդ կետերով սահմանված ընթացակարգով՝ արտահերթ հրավիրված նիստով:

11. Զինվորական ծառայության ընթացքում մարզական վաշտում ծառայության համար անհրաժեշտ պայմանները չբավարարող զինծառայողները կարող են «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջների համաձայն տեղափոխվել ծառայության այլ վայր:

(հավելվածը լրաց. 01.07.19 N 7-Ն)

Հավելված N 9

Պաշտպանության նախարարի

2018 թ. հունիսի 25-ի

N 8-Ն հրամանի

ԿԱՐԳ

«ԶԻՆՈՒԺ ՄԵԴԻԱ» ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒՄ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԶՈՐԱԿՈՉԻ ԵՆԹԱԿԱ ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է «Զինուժ Մեդիա» պետական հիմնարկում ծառայության նշանակելու նպատակով հայտարարված շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության գորակոչի շրջանակներում գորակոչի ենթակա քաղաքացիների (այսուհետ՝ գորակոչիկներ) ընտրության պայմանները և հանձնաժողովի գործունեության կարգը:

2. Զորակոչիկների ընտրության նպատակով հանձնաժողովն անցկացնում է մրցույթ, որի տեղի և ժամի, համալրման ենթակա հաստիքների քանակի մասին, գորակոչի սկսվելու օրվան նախորդող 20-րդ օրից ոչ ուշ, իրազեկումն իրականացվում է պաշտպանության նախարարության պաշտոնական կայքում և լրատվամիջոցներով: Տարածքային զինկոմիսարիատները ևս իրականացնում են մրցույթին մասնակցելու ցանկություն հայտնած անձանց հաշվառվում, որի հիման վրա հաշվառված անձանց անվանացուցակները մրցույթի անցկացման օրվանից առնվազն երկու աշխատանքային օր առաջ ուղարկում են Պաշտպանության նախարարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետին:

3. «Զինուժ Մեդիա» պետական հիմնարկում զինվորական ծառայության նշանակելու նպատակով անցկացվող ընտրությանը չեն մասնակցում՝

1) պաշտպանական մարզատեխնիկական հասարակական կազմակերպությունում պաշտպանության նախարարության պատվերով ռազմահաշվառական մասնագիտություն ստացած գորակոչիկները,

2) ռազմաուսումնական հաստատությունների դիմորդները:

4. Զորակոչիկը մրցույթին մասնակցում է անձը հաստատող փաստաթղթով, առկայության դեպքում իր մոտ ունենալով՝ աշխատանքային կրճատ գործունեությունը (ռեզյումե), կատարած աշխատանքների օրինակներ, և այլ հավելյալ փաստաթղթեր (դիպլոմ, հավաստագրեր):

5. Մրցույթի ողջ ընթացքը տեսաձայնագրվում է: Մրցույթին կարող են ներկա գտնվել նաև գորակոչիկների ծնողները կամ գորակոչիկի կողմից նշված այլ անձինք, սակայն յուրաքանչյուր գորակոչիկի մասով՝ 2 անձից ոչ ավելի, ինչպես նաև հասարակական կազմակերպություններից ներկայացուցիչներ և լրագրողներ, որի վերաբերյալ վերջիններս մինչև մրցույթը սկսվելը տեղեկացնում են հանձնաժողովի նախագահին:

6. Մրցույթի արդյունքներն արձանագրվում են: Արձանագրությունը ստորագրում են հանձնաժողովի բոլոր անդամները: Հանձնաժողովի նիստն իրավագոր է, եթե նիստին մասնակցում են հանձնաժողովի անդամների կեսից ավելին: Արձանագրությունը պաշտպանության նախարարի հաստատմանը ներկայացվում են մրցույթի օրվան հաջորդող 3 աշխատանքային օրվա ընթացքում, իսկ բողոքարկման դիմումների առկայության դեպքում՝ 5-օրյա ժամկետում: Բողոքարկման արդյունքներով գորակոչիկի գնահատականը փոխվելու դեպքում փոփոխությունը ևս արձանագրվում է:

7. Մրցույթն անցկացվում է 2 փուլով: Մրցույթի առաջին փուլ. մասնագիտական քննություն հարցազրույց՝ բանավոր: Մրցույթի երկրորդ փուլ. գործնական առաջադրանքի կատարում՝ ըստ մասնագիտությունների:

8. Մրցույթի առաջին փուլում գորակոչիկները գնահատվում են 20-բալանոց գնահատման սանդղակով՝ հետևյալ մասնագիտություններով.

1) լրագրություն՝

ա. մասնագիտական կրթություն՝ մինչև 2 բալ,

բ. բանավոր և գրավոր հայերենի իմացություն՝ մինչև 4 բալ,

գ. օտար լեզուների իմացություն՝ մինչև 2 բալ,

դ. կատարված և ներկայացված աշխատանքներ՝ մինչև 3 բալ,

ե. ոլորտի շրջանակներում ստացած մրցանակներ՝ մինչև 3 բալ,

զ. լրագրողական նյութ պատրաստելու և խմբագրելու հմտություն՝ մինչև 4 բալ,

է. Microsoft Word ծրագրի իմացություն՝ մինչև 2 բալ.

2) օպերատորական արվեստ

- ա. մասնագիտական կրթություն՝ մինչև 2 բալ,
- բ. օտար լեզուների իմացություն՝ մինչև 2 բալ,
- գ. կատարված և ներկայացված աշխատանքներ՝ մինչև 3 բալ,
- դ. ոլորտի շրջանակներում ստացած մրցանակներ՝ մինչև 3 բալ,
- ե. Canon EOS 5D Mark IV տեսախցիկի տիրապետում՝ մինչև 3 բալ,
- զ. Sony PXW-X200 XDCAM տեսախցիկի տիրապետում՝ մինչև 3 բալ,
- է. DJI Phantom 4 Advanced սարքավորման տիրապետում՝ մինչև 2 բալ,
- ը. GoPro HERO 6 տեսախցիկի տիրապետում՝ մինչև 2 բալ.

3) հեռուստամոնտաժ

- ա. մասնագիտական կրթություն՝ մինչև 2 բալ,
- բ. օտար լեզուների իմացություն՝ մինչև 2 բալ,
- գ. կատարված և ներկայացված աշխատանքներ՝ մինչև 3 բալ,
- դ. ոլորտի շրջանակներում ստացած մրցանակներ՝ մինչև 3 բալ,
- ե. Adobe Premiere pro ծրագրի իմացություն՝ մինչև 3 բալ,
- զ. Final Cut pro ծրագրի իմացություն՝ մինչև 3 բալ,
- է. Adobe After Effects ծրագրի իմացություն՝ մինչև 2 բալ,
- ը. Adobe Photoshop ծրագրի իմացություն՝ մինչև 2 բալ.

4) ցանցային/համակարգչային ադմինիստրացիա

- ա. մասնագիտական կրթություն՝ մինչև 2 բալ,
- բ. օտար լեզուների իմացություն՝ մինչև 2 բալ,
- գ. կատարված և ներկայացված աշխատանքներ՝ մինչև 3 բալ,
- դ. ոլորտի շրջանակներում ստացած մրցանակներ՝ մինչև 3 բալ,
- ե. օպերացիոն համակարգեր՝ մինչև 5 բալ,
- զ. երթուղիչների, կոմուտատորների աշխատանք՝ մինչև 5 բալ:

9. Առաջին փուլի արդյունքներով համապատասխան մասնագիտությունով 12 և ավելի բալ հավաքած զորակոչիկները անցնում են երկրորդ փուլ: Մրցույթի երկրորդ փուլում զորակոչիկները գնահատվում են 50-բալանոց գնահատման անոդակով՝ հետևյալ մասնագիտություններով.

1) լրագրություն

- ա. լրագրողական նյութի պատրաստում՝ մինչև 10 բալ,
- բ. հեռուստառեպորտաժի պատրաստում՝ մինչև 10 բալ,
- գ. հաղորդավարական խոսք՝ մինչև 10 բալ,
- դ. հարցազրույցի կազմակերպում և վարում՝ մինչև 10 բալ,
- ե. աշխատանք Microsoft Word ծրագրով՝ մինչև 10 բալ.

2) օպերատորական արվեստ

- ա. աշխատանք Canon EOS 5D Mark IV տեսախցիկով՝ մինչև 10 բալ,
- բ. աշխատանք Sony PXW-X200 XDCAM տեսախցիկով՝ մինչև 10 բալ,
- գ. կադրի որակ և զեղարվեստական մտածողություն՝ մինչև 10 բալ,
- դ. աշխատանք DJI Phantom 4 Advanced սարքավորման՝ մինչև 5 բալ,
- ե. աշխատանք GoPro HERO 6 տեսախցիկով՝ մինչև 5 բալ,
- զ. ձայնային որակական ապահովում՝ մինչև 5 բալ,
- է. տաղավարային լույսերի տեղադրում՝ մինչև 5 բալ.

3) հեռուստամոնտաժ

- ա. աշխատանք Adobe Premiere Pro ծրագրով՝ մինչև 10 բալ,
- բ. աշխատանք Final Cut Pro ծրագրով՝ մինչև 10 բալ,
- գ. ռեժիսորական մտածողություն՝ մինչև 10 բալ,
- դ. աշխատանք Adobe After Effects ծրագրով՝ մինչև 5 բալ,
- ե. աշխատանք Adobe Photoshop ծրագրով՝ մինչև 5 բալ,
- զ. երաժշտական ձևավորում՝ մինչև 5 բալ,
- է. գրաֆիկական լուծումներ՝ մինչև 5 բալ.

4) ցանցային/համակարգչային ադմինիստրացիա

- ա. MacOS և Windows օպերացիոն համակարգերի իմացություն և սպասարկում՝ մինչև 20 բալ,
- բ. սերվերների ղեկավարման և մոնիթորինգի համակարգեր՝ մինչև 10 բալ,
- գ. TCP/IP Model-ի և ցանցային ծառայությունների (DNS, FTP, NTP, Webserver, iSCSI, VPN և այլն) իմացություն՝ մինչև 10 բալ,

դ. երթուղիչների և կոմուտատորների, Firewall-ների աշխատանքի իմացություն՝ մինչև 10 բալ:

10. Մրցույթի յուրաքանչյուր փուլում հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի գնահատականը յուրաքանչյուր զորակոչիկի համար ձևավորվում է համապատասխան մասնագիտությունից նշանակված գնահատականների

հանրագումարով: Ձորակոչիկի վերջնական գնահատականը ձևավորվում է նիստին ներկա հանձնաժողովի բոլոր անդամների կողմից մրցույթի երկու փուլերով համապատասխան մասնագիտությունից նշանակված գնահատականների հանրագումարի միջին թվաբանական գումարով:

11. Մրցույթի ավարտից հետո հանձնաժողովն ամփոփում է արդյունքները և նույն օրն իրազեկում մրցույթի մասնակից գորակոչիկներին՝ իրենց հավաքած ընդհանուր միավորների մասին: «Զինուժ Մեդիա» պետական հիմնարկում զինվորական ծառայության նշանակվելու իրավունք են ստանում այն գորակոչիկները, որոնք մրցույթի երկու փուլերի արդյունքում հավաքում են ամենաբարձր միավորները՝ ըստ «Զինուժ Մեդիա» պետական հիմնարկում համապատասխան մասնագիտությունով համալրման ենթակա հաստիքների քանակի:

12. Հանձնաժողովը մրցույթի արդյունքների հիման վրա կազմում է այն գորակոչիկների անվանացուցակը, ովքեր իրավունք են ստացել զինվորական ծառայության նշանակվելու «Զինուժ Մեդիա» պետական հիմնարկում և ներկայացնում է պաշտպանության նախարարի հաստատմանը:

13. Զինվորական ծառայության ընթացքում «Զինուժ Մեդիա» պետական հիմնարկում ծառայության համար անհրաժեշտ պայմանները չբավարարող զինծառայողները կարող են «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջների համաձայն տեղափոխվել ծառայության այլ վայր:

(հավելվածը լրաց. 01.07.19 N 7-Ն)